

7225

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Տարրական Դասընթացի

Ա. Ե. Բ. ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԵՒ

ՔԱՐՏԻՍԱԻՈՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՄԱԶԱՅԵՆ ԿՐԹԱԿԱՆ ՄՐԱԳՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՔՈՐՀՐԳՈՅ

ԱԶԳ. ԿՆԻՐՈՆԱԿԱՆ Պ.Ա.ՐԶՈՒԹԻԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՐԵՆՈՐ ՅԱՆՆԻՈՒՄՆԵՐՈՎ, ՃՈՒԱՅԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ԱՐՇԱԿ ԿԱՐՈՆԻԱՆ — Պոպո-Ալի և Սսէօր

1910

91(075)  
5-35

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

50

91(075)  
Մ-35  
մ

Տարրական Դասընթացի

Printed in Turkey

Ա. Է. Բ. ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՐՏԻՍԱԻՈՐ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ, ԲՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ՀԱՄԱԶԱՅՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԳՈՅ

ԱԶԳ. ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԿԱՐԶՈՒԹԵԱՆ



ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՒԵԼՈՒՄՆԵՐՈՎ ՀՈՒՍՑԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ԱՐՇՈՎ ԿԱՐՈՒԹԵԱՆ — Պապր-Ալի հասկէսի

1910



Մասնաւոր Բարձրագոյն  
Մարտի 24-ի Թիֆլիսի շաքարեղէնի  
Բարձրագոյն  
20 շաք. 1911

ՅԱՌԱՋԱԲԱՆ Գ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Տարբ. Դասընթացներու սահմանուած սոյն դասագրքիս երրորդ սպագրութեանը ձեռնարկած պահուս, երկու տեսակետով ուրախութիւն կը գգամ: Նախ՝ քաջալերական ըլլալու աստիճան՝ ա՛յնքան քիչ օրջանի մը մէջ անոր գտած ընդհանուր եւ համակիւր ընդունելութեանն համար: Երկրորդ՝ Աշխարհագրութեան դասագրքերու նորելուկ հեղինակներէ ոմանց ցոյց տուած ա՛յն տարապայման գնահատութեանն համար, որով, սոյն դասագրքիս պարունակութեան ամենէն եական մասերը = ՀՐԱՀԱՆԳ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՎԵՐԱԲԱՂ, ՄՏԱՄԱՐՁԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ Եւն. — գրեթէ տառական կերպով կ'ընդօրինակեն եւ կ'իւրացնեն իրենց դասագրքերուն մէջ:

Իրաւ է թէ կառավարական օրէնք (Հեղինակի իրաւունք) եւ մարդկային բարոյականը այս ընթացքին պարզապէս ՎՐԱՆ ԲԱՅ ԳՈՂՈՒԹԻՒՆ անունը կուտան, սամայն ես ո՛չ միայն ներուպմիս կը գտնուիմ ասոնց նկատմամբ, այլ եւ ինձի պարծանք ալ կը համարիմ, խորհելով որ Բանի մը հեղինակներու այդ անորակելի ընթացքէն օգտուողը՝ դարձեալ Հայ ուսանողը պիտի ըլլայ:

Պատ. Ուսուցիչ, դասագրքիս սոյն նոր սպագրութեան մէջ ալ փորձով պիտի տեսնեն որ, ես, ո՛չ թէ ՅԱՆՁԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ կամ բարգմանօրէն, այ՛լ, իմ երեսնամեայ փորձառութենէս եւ պատշտօնիս ամենօրեայ գործնական կեանքէն թելադրուելով է որ պատշաճա՛մ եմ որ եւ է դասագրք՝ որոնց բազմաթիւ սպագրութեանց արժանացած ըլլալը՝ ամենէն փայլուն գրաւականն է իրենց պերճախօս գեղազանցութեան:



2004

(350 / 40) 16418-58

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

## Բնական եւ Քաղաքական

### Դ Ա Ս Ա Ռ Ա Ջ Ի Ն

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵՆԻԿ


Աշխարհագրութիւնը շատ կարեւոր եւ սինքն՝ տարին մէկ անգամ ալ Արեգակին հաճելի ուսում մըն է: Անիկա մեզի կը բոլորովին շրջան կ'ընէ՝ որմէ յառաջ կուտորվեցնէ Երկիրս ձեւը, Շարժումները, գան տարիին չորս եղանակները՝ որոնք են՝ Ցամաքին եւ Ջուրին բաժանումները Բոյ-Գարուն, Ամառ, Աշուն, Ձմեռ: Երկիրս ունի 40,000 քիլոմէթր շրջապատ: Արեւէն մէկ միլիոն անգամ փոքր եւ Լուսինէն 49 անգամ մեծ է:

Մեր բնական Երկիրը նարնջի նման կը լուսինէն 49 անգամ մեծ է: Եւ կը կոչուի Գունն կամ Երկրագունն:



ԳԻՇԵՐ ԵՒ ՑՈՐԵԿ

Թէեւ մենք չենք զգար, բայց Երկիրս կը դառնայ: Նախ՝ 24 ժամը մէկ անգամ ինքն իր վրայ կը դառնայ որով կ'ըլլայ Գիշեր եւ Ցարեկ: Երկրորդ, 365 օրը, այ-



ԵՐԿԻՐՍ ԿԼՈՐ Է

ԵՐԿԻՐՍ ՄԱԿԵՐԵՒՈՅԹԸ

Ինչպէս որ տեսանք, Երկիրս նարնջի պէս կը լուսինէն 49 անգամ մեծ է: Անոր երեսը կը կոչուի Մա-

կերելոյ՝ որուն երեք մասը Զուր եւ մէկ մասը Յամախ է :

Ազի ջուրի ընդարձակ տարածութիւնները Մով եւ Ուկիիանոս կ'ըսուին, Հողին մեծամեծ կտորներն ալ կը կոչուին Յամախ երկիր կամ Աւխարն :

**ԵՐԿՐԻՍ ՉՈՐՍ ԳԼԻՍԻՈՐ ԿՈՂՄԵՐԸ**

Երկիրս չորս գլխաւոր կողմեր ունի : Հորիզոնին այն կողմը՝ ուսկից արեւը կը ծագի, կը կոչուի Արեւելք : Արեւելքին հակառակ կողմը՝ ուրկէ արեւը մարը կը մտնէ՝ Արեւմուտք կ'ըսուի : Երբոր երեսներս զէպի արեւելք դարձնենք, աջ կողմերնս կ'ըլլայ Հարաւ եւ ձախերնս՝ Հիւսիս :

Աշխարհացոյց քարտէսներու վրայ՝ Արեւելքը միշտ աջ կողմն է, Արեւմուտքը՝ ձախը, վերի կողմը Հիւսիս է եւ վարի կողմը՝ Հարաւ :

**ԵՐԿՐԱԳՈՒՆՆՏ ԵՒ ՔՍՐՏԷՍ**

Երկիրս մակերեւոյթին այլ եւ այլ կողմերը դիւրաւ եւ ազէկ սորվելու համար, Երկրագունն եւ Քարտէսներ կը դործածուին :

Գունն կամ Երկրագունն ըսելով կը հասկընանք ձեռքով շինուած գունտ մը, որու վրայ նշանակուած են ցամաքի եւ ջուրի բաժանումները, երկիրները, քաղաքները, եւ այլն :

Աւխարհացոյց քարտէս կ'ըսուին զանազան մեծութիւնով այն թուղթերը՝ որոնց վրայ զծագրուած է երկիրս ամբողջ մակերեւոյթը կամ անոր մէկ մասը :



Համասարած կ'ըսուին՝ աշխարհագրական այն քարտէսները՝ որոնց վրայ երկիրս ամբողջ պատկերացած է :

Երկիրս բաժնուած է հինգ զօտիներու : Ճիշտ մէջտեղի մասը, որ կը կոչուի Հասարակած, սաստիկ տաք կ'ընէ եւ կ'ըսուի Արեւեցեայ զօտի : Գունաին երկու ծայրերը՝ որոնք կ'ըսուին Հիւսիսային եւ Հարաւային բեւեռներ՝ սաստիկ ցուրտ կ'ընեն եւ կը կոչուին Սառուցեայ զօտիներ : Իսկ Այրեցեայ եւ Սառուցեայ զօտիներուն մէջտեղ գտնու ծ մասերը՝ ուր ցուրտը եւ տաքը չափաւոր են, կը կոչուին Բաւելխառն զօտիներ :

Մեր երկրագունտին ամէն մասերը միևնոյն չափով ցորտ, բարեխառն կամ տաք չ'են : Տեղեր կան ուր սաստիկ ցուրտ, սաստիկ տաք եւ կամ բարեխառն են :

Ահաւաստիկ ցուրտի, տաքի եւ բարեխառնի այս սատիճաններն են որ Գօտի կ'ըսուին :

Գունտը մաքուրնս կրնանք չորս մասերու բաժնել : Օրինակի համար, երբոր մեր երկիրը նորինջ մը նկատենք եւ վերէն վար կտրելով երկուքի բաժնենք, կ'ունենանք երկու կիսագունտ, Արեւելեան եւ Արեւմտեան : Գարձեայ՝ երբոր ճիշտ մէջտեղէն, այսինքն Հասարակածին վրայէն երկու հաւասար մասերու բաժնենք, նորէն կ'ընենանք երկու կիսագունտեր, այսինքն՝ Հիւսիսային եւ Հարաւային կիսագունտեր :





ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԵՐ

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Աշխարհագրութիւնը ի՞նչ կը սորվեցնէ: — Երկիրս ի՞նչ ձև ունի: — Քանի՞ շարժում ունի և անոնցմէ ի՞նչ բաներ յառաջ կուգան: — Օրը քանի՞ ժամ է: — Մէկ տարիին մէջ քանի՞ օր կայ: — Երկրիս մակերևոյթը ըսելով ի՞նչ կը հասկնաս: — Անոր ո՞րչափը Հող և ո՞րչափը Ջուր է: — Երկրիս չորս գլխաւոր կողմերը որո՞նք են, և ի՞նչ կերպով կրնանք հասկընալ: — Աշխարհացոյց բարեկէտներու վրայ չորս զըլխաւոր կողմերը ի՞նչպէս նշանակուած են:

Դ Ա Ս Գ

ԵՐԿՐԻՍ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Տեսանք որ Զուրի ընդարձակ տարածութիւնները Մով, և աւելի մեծերն ալ Ուկրաինոս կ'ըսուին: Հինգ ուկրաինոս կայ. 1. Մեծ կամ հաղաղական ուկրաինոս: 2. Ասլանցեան. 3. Հնդկաց: 4. Ար-

չային եւ 5. Հակաբալային ուկրաինոսներ: Հինգ հատ ալ մեծ Յամալցիներ կան, ԵՒՐՈՊԱ, ԱՍԻԱ և ԱՖՐԻԿԵ որոնք հին աշխարհ կ'ըսուին, ինչու որ շատ հին ատեններէ ի վեր ծանօթ են մարդոց, իսկ՝ ԱՄԵՐԻԿԱ և ՈՎԿԻԱՆԵՍ՝ կը կոչուին Նոր Աշխարհ. որովհետեւ 400 տարի է որ գտնուած են: Այս հինգ ցամաքներուն մէջ բնակող մարդիկ կը բաժնուին չորս զըլխաւոր ցեղերու. 1. — Սպիտակ կամ կովկասեան ցեղ, որ ունի ճերմակ գոյն, վայելուչ հասակ և գեղեցիկ դէմք: Ասոնք կը բնակին Եւրոպայի, Ասիոյ մէկ մասին ու Եւրոպացիներէ հաստատուած հեռաւոր գաղթականութիւններու մէջ: 2. — Դեղին ցեղ, ասոնք ալ ունին դեղին գոյն, մեծ ու կտր գլուխ, լայն երես ու խոշոր բերան: Այս ցեղը ընդհանրապէս կը բնակի Ասիոյ արեւելեան և միջին մասերուն մէջ: 3. — Պրննագոյն կամ Ամերիկեան Հնդիկներ՝ որոնց մարմինը կարմիրի մօտ գոյն մը ունի,

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Զուրի ընդարձակ տարածութիւնները ի՞նչ կ'ըսուին: — Քանի՞ Ուկրաինոս կայ: — Որո՞նք են հինգ ցամաքները: Ո՞ր ցամաքները կը կոչուին Հին և որո՞նք Նոր Աշխարհ: Մարդկային ազգը քանի՞ գլխաւոր ցեղերու կը բաժնուի: — Իրարմէ ի՞նչ բաներով կը տարբերին: — Որոնք կ'ըսուին Քաղաքակրթեալ, Թափառական եւ վայրենի ժողովուրդներ: — Աշխարհի վրայ քանի՞ գլխաւոր կրօնք կայ:

Դ Ա Ս Գ

ՅԱՄԱՔԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Աշխարհագրութեան մէջ Յամաքի և Զուրի մեծ ու փոքր բաժանումները իրենց առանձին անուններն ունին: Ուստի, նախ ցամաքին անունները սկսինք սորվիլ:

Կղզի կ'ըսուի հողին այն մասը՝ որ ամէն կողմէն ջուրով շրջապատուած է: Իրարու մօտ գտնուած մեծ կամ փոքր շատ մը կղզիներու խումբը Արխիպելագոս կամ կղզեխումբ կ'ըսուի:

Թերակղզի կ'ըսեն այն ցամաքին որ երեք կողմէն ջուրով պատած և միայն մէկ կողմէն հողի կտորով մը կապուած է ցամաքին:

Թերակղզին ցամաքին միացնող հողի փոքր մասն ալ Պարանոց կ'ըսուի:

Դաւոս կ'ըսուին երկրիս տափարակ ու բարեբեր տեղուանքը՝ ուր այլ և այլ բոյսեր յառաջ կուգան:

Աւազուտ և ընդարձակ տեղուանքը Անապաս կը կոչուին՝ ուր ո՛չ բոյս կայ և ո՛չ ալ բնակութիւն:

Ովախի կ'ըսուին՝ անապասներու մէջ՝ տեղ տեղ գտնուած բարեբեր ու բնակելի տեղերը:

աչքերնին խորունկ և գլուխնին կուտա է: Այս ցեղը կը բնակի Ամերիկայի մէջ: 4. — Մեւ կամ հալիթի ցեղ որոնց գոյնը բոլորովին սեւ է: Ասոնք ունին տափակ քիթ, լայն չրթունք, գանգուր մազեր ու երկայն ակաւոյ: Այս ցեղը ընդհանրապէս կը բնակի Ափրիկէի մէջ:

Մարդիկ միայն իրենց գոյնով և մարմնի ձևերով չէ որ իրարմէ կը տարբերին, հապա, իրենց լեզուով, իրենց անցեալով, կրօնքով, ծագումով, կրթութիւնով, արհեստներով և վաճառականութիւնով: Այն ազգերը՝ որոնք Աստուածապաշտ են և ունին հաստատուն բնակութիւն ու կանոնաւոր կառավարութիւններ, կ'ըսուին Քաղաքակրթեալ: Թափառական կը կոչուին այն ժողովուրդները որոնք հաստատուն բնակարան չունին եւ կ'ապրին մի միայն որսորդութիւնով և կամ խաշնարածութիւնով: Բարբարոս կամ վայրենի կ'ըսուին այն ժողովուրդները որոնք քարայրներու կամ խրճիթներու մէջ կ'ապրին և որոնց գլխաւոր զբաղումն է աւազակութիւն և պատերազմ: Այս վայրենիներուն մէջ մարդակեր ցեղեր ալ կը գտնուին:

Աշխարհիս վրայ երեք գլխաւոր կրօնք կայ, Քրիստոնէութիւն, Մանմեհականութիւն և Մովսիսականութիւն: Ասոնցմէ ի գատ, հարիւրաւոր միլիոն կուսապաշտներ ալ կան: (\*)


(\*) Կուսապաշտներուն մէջ ալ կան հետզհետէ քաղաքակրթուող ազգեր. ինչպէս են Չինացիք, Պիրմանիացիք, Սիամցիք, բայց մանաւանդ ձաբոնցիք:

Երկրիս բարձր տեղումքը Լեռ կ'ըսուին: Բլուրք՝ փոքր լեռ մըն է: Իսկ երբոր շատ մը լեռներ իրարու միացած ըլան՝ կ'ըսուին Գօտի կամ Լեռնաշղթայ:

Լեռան մը ամենէն վերի մասը Գագաթ կամ Սար, մէջտեղը Կող, իսկ ամենէն վարի մասն ալ Ստրոտ կ'ըսուի:

Հրաբուխ կ'ըսուին այն լեռները որոնց գագաթէն ատեն ատեն կրակ, մուխ, խոչոր քարեր և հալած նիւթեր դուրս կը պուրկան: Հրաբուխները երբեմն ամբողջ քաղաքներ կը կործանեն և հազարաւոր մարդոց մահուանը պատճառ կըլլան:

Հրաբուխին բերանը կը կոչուի Խառնարան, իսկ անոր բերնէն վազած հեղուկն ալ՝ Լավա կ'ըսուի:



ՎԵՍՈՒՎ

Չոր կ'ըսուին երկու լեռներու մէջ գտնուած խորանկ տեղերը:

Այլ կամ Անձաւ կ'ըսեն՝ լեռներու մէջ գտնուած բնական խոչոր ծակերուն:

Հովիտ կ'ըսուին այն ընդարձակ դաշտերը որոնք երկու լեռներու շղթային մէջտեղը կը գտնուին:

Յամաքին դէպ ի ծով երկնցած մասը կ'ըսուի Գլուխ: Երբ Գլուխը շատ մեծ ու բարձր ըլլայ, Հրուանդան կը կոչուի: Դէպ ի ծով երկնցած հողի տափարակ մասերն ալ Լեզու կ'ըսուին:

Գ Ա Ս Գ.

ՋՈՒՐԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Նախորդ դասին մէջ տեսանք որ Երկրիս մակերեւոյթին միայն մէկ մասը ցամաք, իսկ երեք մասը ջուր է:

Յամաքին պէս՝ Ջուրին ալ և ալ ձևերն ալ իրենց առանձին անուններն ունին: Օրինակի համար,

Աղի ջուրի ընդարձակ տարածութիւնները՝ Ովկիանոս և Ծով կ'ըսուին:

Ծոց կ'ըսուի ծովին այն մասը որ դէպի ցամաք ներս մտած է: Եթէ ծոցը փոքր ըլլայ, Խոր է կ'ըսուի:

Նեղուց կ'ըսուի ջուրին այն նեղ մասը որ երկու ծով կամ երկու ովկիանոս իրարու կը միայնէ ու երկու ցամաք իրարմէ կը բաժնէ: Եթէ նեղուցը լայն ըլլայ, Ջրանցք կ'ըսուի:


Յամաքին մէջ անշարժ կեցող ջուրի տարածութիւնները Լիւն կ'ըսուին:

Գետ կ'ըսուին ցամաքին մէջէն բղխելով դէպ ի ծով թափող անուշ ջուրի հոսանքները: Փոքր գետերը կ'ըսուին Գետակ ու Առուակ:

Գետի մը բղխած աեղը Ակ, իսկ ծովը թափած տեղը Գետաբերան կը կոչուի:

Ջրվեժ կ'ըսուի այն գետը որ բարձր տեղէ մը վար կը թափի:

Նաւահանգիստ կ'ըսուին այն փոքր և ապահով խորշերը՝ ուր նաւերը կը կենան՝ ճամբորդ և վաճառք առնել տալու համար:



ՋՐՎԷԺ

Գ Ա Ս Ե.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մարդկային ազգը կը բաժնուի ..... գլխաւոր ցեղերու . 1.

..... 2

3 ..... 4

Սպիտակ ցեղը կը բնակի ..... մէջ:

Դեղին ցեղը կը բնակի ..... մէջ:

Ամբիկեան Հնդիկները կը բնակին ..... մէջ.

Սև կամ Խափշիկ ցեղը կը բնակի ..... մէջ:

Յամաքին ալ և ալ ձևերը իրենց առանձին անուններն ունին, ինչպէս .....

.....

Նոյնպէս՝ ջուրին ալ զանազան ձևերը իրենց մասնաւոր անուններն ունին: Թիշեմ

օրինակի համար, անոնց գլխաւորները՝ .....

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1.

Գրատախտակին վրայ կաւիճով գծէ Երկրագունց մը և վրան նշանակէ Հասարակածը, Հիւսիսային և Հարաւային բևեռները:

2.

Առանձին առանձին գծէ՝ Լեռ մը, նշանակելով անոր գագաթը, կողը և ստրոտը: Գծէ՝ նաև Լեռնաշղթայ մը, Հովիտ մը, Չոր մը և Հրաբուխ մը:

3.

Գծէ՝ Կղզի մը, Արեւիկադոս մը, Թեւակղզի մը պարանոցով, Գլուխ մը, Ովապիս մը:

4.


Գծէ՝ Ծոց մը, Նեղուց մը, Լիւն մը, Ջրվեժ մը:

5.

Գծէ՝ Գետ մը, նշանակելով անոր ակը, ընթացքը եւ բերանը:

ՀԱՐՑԱՐԱՆ

Ի՞նչ է դաշտին և անապատին տարբերութիւնը: — Կղզիին և Թերակղզիին: — Ծոցին և խորշին: — Նեղուցին և Ջրանցքին: — Լեռան և Լեռնաշղթային: — Չորին և լեռնազագածին: — Լիճին և գետին: — Դաշտին և Հովիտին:



Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Ո Ւ Ի Ս

Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Ո Ւ Ի Ս

Օսմանեան Կայսրութեան Մարյաքազաքն է ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, որ բնական շատ գեղեցիկ գիրք և զուարճալի տեսարաններ ունի:

Կ. Պոլիս երեք գլխաւոր մասերէ կը բաղկանայ. Ա. ԲՈՒՆ ԻՍԹԱՆՊՈԼ, որ եօթը բլուրներու վրայ շինուած և Ղալաթիա ու Բերա արուարձաններէն բաժնուած է Ոսկեղջիւրի ծովակովը: Բ. ՂԱԼԱԹԻԱ և ԲԵՐԱՍ՝ Ոսկեղջիւրս և Վոսփորի Եւրոպական եզերքներուն վրայ գտնուած գիւղերով: — Գ. ԻԻՍԿԻԻՏԱՐ և ԿՍՏՐԲԷՍԵՎ՝ Վոսփորի Ասիական եզերքին վրայ գտնուած գիւղերով:

ՈՍԿԵՂՋԻՐԻ

Այս գեղեցիկ գետակին ալ եզերքին վրայ՝ ներսէն սկսելով, կարգաւ կը զբտնախին հետեւեալ գիւղերը: Էյուպ, ուր կայ գեղեցիկ մզկիթ: Օսմանեան Սուլթանները իրենց գահակալութենէն յետոյ՝ այս մզկիթին մէջ հանդիսաւոր կերպով մէջքերնին կը կապեն Կ. Պոլիսն առնող Ֆաթիհ Սուլթան Մէհմեթի պատմական սուրը:

Էյուպի ծովեզերքը կը գտնուին երեւելի իսլամներու զարդարուն և փառաւոր զամբարանները:

Հայերը Էյուպի մէջ ունին Ս. Ասուածաձիւն անուն փոքր եկեղեցի մը: Նոյնպէս վերին Էյուպի մէջ ալ կայ Ս. Նիղիա անուն եկեղեցի մը Պեզնեան անուն վարժարան մը:

Էյուպի կիցն է Տեֆթեսար, ուր կը գտնուի Տէրութեան Ֆեսիանէն: Յետոյ կը


տեսնենք Ալվան-Սեռայ և Պալաթ՝ ուր կը գտնուին Հայոց Ս. Հրեոսակապէտ եկեղեցին և Խորհնեան վարժարանը: Ֆեներ՝ ուր կան Յունաց Պատրիարքարանը, Մայր եկեղեցին, Մայր վարժարանը, նոյնպէս Պուլկարական եկեղեցի մը: Եարունակելով ճամբանիս, այս գծին վրայ կը կը տեսնենք Այազաբու, ձիպալի, Ուն-գաբան, Եմիւ-Իսկիլիսի:

Ոսկեղջիւրի ձախ եզերքին, ներսէն սկսելով՝ կարգաւ կը գտնուին Սիւսլիւնէ, Հայրնը-Շղլու, ուր կան Հայոց Ս. Սեւփաննոս հոյակապ եկեղեցին, Ս. Ներսէսեան երկսեռ վարժարանը զոր քարուկիր վերաշինեց բնիկ Պապիւղցի բարեյշատակ Թորոս էֆ. Բարաղամեան: Նոյնպէս, Սրբբուհի Մայրապերին հիմնած Գալֆաեան աղջկանց Որբանոցը: Տէրութեան երկրաչափական վարժարանը: Գարձեալ, Հայրնը-Օղղլուի մօտ, Գարա Աղաճի կիցը կը գտնուի Տէրութեան Փամիշտարանը (Ֆիշէնկհանէ) և շատ մը աղիւսի գործարաններ: Փիւրի-Փաւա, հոս է Շիրեքի շողեաններու գործարանը: Հասֆոյ և Այնալը-Գալվազ՝ հրէաբնակ թաղերը: Գասրմ Փաւա՝ որուն ծովեզերքը կը գտնուին տէրութեան մեծ նաւարանը, ծովային վարժարանը, հիւանդանոցը, ծովեզերեայ կայսերական գեղեցիկ քէչօկ մը ևն:

Այս թաղին մէջ է Մծրնայ Ս. Յակոբի եկեղեցին: Յետոյ կը տեսնենք Ազապ Գաբու և Ղալաթիա:

Ոսկեղջիւրի ներսերը կը գտնուին երկու գեղեցիկ գետակներ, Բեաղրոս-Խանէ և Սիլանհար կամ Չօպան-Չեւեհ որոնց եզերքները զուարճալի դրօսավայրեր են: Բեաղրոսանէի մէջ կը գտնուին՝ Իմրահօրի եւ Չաղրիլանի կայսերական գեղեցիկ քէօկերը:

Գարձեալ, Ոսկեղջիւրի վրայ երկու կա-



ԻՄՐԱՀՕՐԻ ՔԷՕԿԸ

մուրջներ կը գտնուին, մէկը Ազապ-Գաբուէն Ուն-գաբան, միւսը՝ Ոսկեղջիւրի վերջացած տեղը, այսինքն՝ Ղալաթիայէն Պաղչե-գալիու որ կը կոչուի Գարաֆոյի կամուրջ:

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ԲԵՐԱ

Ղալաթիոյ մէջ կը գտնուին երեւելի վաճառատուններ, դրամատուններ (պանքա) նամկատուններ և փառաւորխաներ: Ղալաթիա մասնաւորապէս հարծի և առուտուրի տեղ մըն է:

Հայերը Ղալաթիոյ մէջ ունին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Կեղրոնական և թաղային վարժարանները, Մասենաղարանը ևն: Ազապ-Գաբուէն մինչև Ղալաթիա և անկից մինչև Օրթաքէօյ՝ հանրակառք կը բանի: Նոյնպէս, Ղալաթիայէն Բերա և անկից մինչև Շիշլիալ հանրակառք (թրամուէյ) կայ: Ղալաթիոյ մէջ կը գտնուին ևս ստորերկրեայ երկաթուղի մը (թիւնէլ) որ Բերայի կապուած է:

Ղալաթիոյ կամուրջէն մինչև Թօփհանէ գեղեցիկ քարափ կը (բրիսթըմ) շինուած է՝ ուր մեծ շոգնաւեր կը մօտենան:



կը գտնուի ծովեզերեայ կայսերական խիստ փառաւոր պալատ մը, մզկիթ մը և ժամացոյցի գեղեցիկ աշտարակ մը:


Կուզանք Պեքիկթաւ, Հայերը հոս ունին Ս. Ասուածամիկն անուն եկեղեցի մը և Մաքուհեան երկսեռ վարժարանը:

Օրբաֆէօյ՝ որու ծովեզերքը կը գտնուի Չրադանի այրած գեղեցիկ պալատը և նա-



ԹՕՓՀԱՆԵ

ւամատոյցին քովն ալ՝ շատ սիրուն մզկիթ մը: Ղալաթիայէն մինչև Օրթաքէօյ թրամուէջի գիծ մը կայ: Օրթաքէօյի մէջ Հայերը ունին Ս. Ասուածամիկն անուն եկեղեցի մը և Թարգմանչաց ու Հովիտիսեանց վար-




ԲՈՒՄԵԼԻ ՀԻՍԱՐ

ժարանները, Պէշիկթաշի և Օրթաքէօյի բարձունքին վրայ կը գտնուի Նրլսրզի պա-

լատը՝ ուր 33 տարի բնակեցաւ գահընկեց Սուլթան Համիտ: Ծարունակելով ճամբանիս, յաջորդաբար կը տեսնենք Գուլում Չեմե, Արնապուս ֆէօյ, Պեպեֆ, Բումեյի-Հիսար՝ որու բարձրը շինուած է Բօպէրթ Բօլէճ ա- նուն Ամերիկեան բարձրագոյն վարժարանը: Հոս կը գտնուին նաև հինէն մնացած պարսպներ և աշտարակներ: Յետոյ կարգա- կուզանք Պոյանր Բէօյ, Էմիրկեմ, Սրեքիա, Եհնի Բէօյ, Թարապիա, Պէօյիւֆ-Տեքե, Մե- սար Պուրնու, Սարը-Նար և Եհնի-Մահալլի: Վոսփորի վերջին գիւղն է Բումեյի-Գալազ: Հայերը եկեղեցի և դպրոց ունին Գուլում Չէշմէի, Հիսարի, Պոյաճը գիւղի, Սթէն- կայի, Եհնի գիւղի և Պէօյիւք-Տէրէի մէջ: Վոսփորի այս եզերքին վրայ կը գտ- նուին ծովեզերեայ գեղակերտ սպարանք- ներ Եւրոպական դեսպանատուններ՝ գե- ղեցիկ պարտէզներով և քարափներով զար- դարուած՝ որոնք իբրև ամառանոց կը ծա- ապեն:

ՎՈՍՓՈՐԻ ԱՍԻԱԿԱՆ ԵԶԵՐՔԸ

Բումեյի-Գալազէն կ'անցնինք դիմացի եզերքը՝ ուր կը գտնուի Անասոյու-Գալազ: Ասկից ճամբանիս շարունակելով դէպ ի վար, յաջորդաբար կը տեսնենք Պէյֆօզ՝ ուր կը գտնուի կայսերական գեղեցիկ քէօշ մը: Հայերը հոս եկեղեցի և դպրոց ունին: Յետոյ կը տեսնենք Իննիր ֆէօյ, Փաւա Պաղչեսի, Չուպուլու, Գա լրնա, Անասոյու-Հիսար: հոս ալ բերդեր կը գտնուին: Իէմ առ դէմ երկու Հիսարները՝ Վոսփորի ամենէն նեղ մասը կը կազմեն: Անատոյու Հիսարի քովը կը գտնուի Կեօֆ Սուլու գետակը և ծովե- ղերեայ կայսերական Բէօշկ մը: Յետոյ կուզանք Քանսիլլի, հոս ալ Հայերը եկեղեցի ունին: Վանի Բէօյ, Չեհնիկ Բէօյ, Պէյլե-



ԱՆԱՏ. ՀԻՍԱՐ

պէյ՝ որ ունի ծովեզերեայ հոյակապ պալատ: Գուզկուհնուզ, հրէարնակ թաղը: Հոս է Հրէից խառնատունը: Հայերը այս գիւղին մէջ ունին Ս. Գրիգոր Լուսաւորիչ անուն եկեղեցի և վարժարան: Գուզկուհնուզէն յետոյ կու գանք Իւսկիւսար՝ որ է Վոսփորի Ասիական վերջին և ամենէն մեծ արուար- ձանը:

ԻՒՍԿԻՒՏԱՐ ԵՒ ԳԱՏԸԳԻՂ

Իւսկիւտար, ընդարձակ և բազմամարդ արուարձանը կը գտնուի Իսթանպոլի և Բերայի դիմացը: Նաւամատոյցին շրջակայ մասերէն դէպ ի վեր՝ բարձրերը ելլելով՝ կը տեսնենք որ, Իւսկիւտար երեք գլխաւոր թաղերու կը բաժնուի: Ա. ԵՒՆԻ ՄՍ. ՀԱՆԼԷ՝ ուր կը գտնուի Ս. Կարապետ եկեղեցին ու վարժարանը: Բ. ՍԵՂԱՄՍԸՋ՝ ուր կը գտնուի Ս. Խաչ եկեղեցին և նոյն անուն երկսեռ վարժարանը: Հոս են նաև Պեքլե- եան գիշերօթիկ համալսարան վարժարանը և Ամերիկեան Աղջկանց Բօյեօր: Գ. ԻՃԱ- ՏԻՅԷ. ուր կը գտնուի Ներսիսեան-Երմուհեան վարժարանը:

Իւսկիւտարի ետևը՝ հեռուն կը բարձրա- նայ Չամլրնա լեռը որու գագաթին Պոլսոյ ճայնապատկերը որոշ կերպով կը տեսնուի: Իւսկիւտարի մէջ նոր վարժարաններ են Կարապետեան Աղջկանց և Առևտրական

վարժարանը: Իւսկիւտարի ծովեզրէն Մար- մարա մանելու գծին վրայ կը գտնուի Գրգ- Գուլէսի անուն աշտարակը: Իւսկիւտարի ծովեզրէն ճամբանիս շարունակելով կը մտնենք Մարմարա՝ ուր առձյին անգամ կը տեսնենք Հայսար-Փաւա: Հոսկից կը մտնի Ասիական Թուրքիոյ երկաթուղին դէպ ի երկրին ներսերը: Նշանաւոր են նաև Սելիմիյէի ընդարձակ զօրանոցը, Անգ- լիական զարգարուն գերեզմանատունը և մանաւանդ՝ բժշկական նոր և հոյակապ վարժարանը, Հայտար-Փաշայի ծովեզերքը գեղեցիկ քարափ մը շինուած է: Հոս է եր- կաթուղիի ընկերութեան նորաշէն և փա- ռաւոր կայարանը:



ՀԱՅՏԱՐ ՓԱՇԱ

Հայտար Փաշայէն կուզանք Գասրգիւղ մեծ, գեղեցիկ և բազմամարդ արուարձա- նը: Հայերը հոս ունին սիրուն եկեղեցի մը Ս. Թագաւոր անուն, Արամեան երկսեռ վարժարանը: Կան նաև Մխիթարեան Հայ- բերու, Ֆրէրներու, Եւրոպացի մայրապետ- ներու վարժարաններ: Գասրգիւղէն շա- րունակելով ճամբանիս դէպ ի Նիկոմիդիոյ ծոցը, կը տեսնենք Ֆեհրե պահնէ, Գրըլ- Թօփրագ և ուրիշ քանի մը ծովեզերեայ գիւղեր՝ որոնցմէ յետոյ կը հասնինք Գաւ- քալ: Հոս ունինք Ս. Նսան անուն եկե-

զեցի մը և Պեզնեան անունով երկսեռ վարժարան: Նիկոմիդիոյ ծոցին այս եզերքին վրայ կը գտնուին ներքին ու ծովեզերեայ գեղեցիկ ամարանոցներ, երկաթուղի կայարաններ, մշակուած գեղեցիկ դաշտեր, մրգատաններ, այգիներ և բանջարանոցներ:

**ԻՇԵԱՆԱՑ ԿԴՋԻՆԵՐ**

Այսպէս կը կոչուին այն 9 կղզիները որոնք Իզմիտի ծոցին բերանը կը գտնուին: Ասոնց հինգը փոքր է, իսկ չորսը մեծ և բնակելի:

Չորս մեծերն են Գրոնալը (Բրոթի), Պուրկազ (Անթիկօնի), Հիլպիլի (Սալգի), Պեոյիւք Ասա (Բրինջիթո) որ ամենէն մեծը և բազմամարդն է: Այս կղզին նշանաւոր է իր զմայելի պարտէզներուն, զուարճալի տեսարանին և սիրուն շէնքերուն կողմանէ: Գրոնալը մէջ ունինք Ս. Լուսաւորիչ անուանով փոքր եկեղեցի և թաղային վարժարան մը:

**ԲՈՒՆ ԻՍԹԱՆՊՈԼ**

Ինչպէս որ տեսանք, Բուն Իսթանպոլ կոչուած մեծ արուարձանը եռանկիւնի մը ձևն ունի և կը սկսի Ոսկեղջիւրի ներսէն մինչև Պողոչէ Գափու և անկէց՝ Սէրայ Պուրնիէն դառնալով դէպ ի Մարմարա: Հոս, Եէտի Գուլէի ծովեզերքէն սկսեալ կը գտնուի ին պարիսպ մը որ քաղաքին արեւմուտքէն կ'երկարի մինչև Այվան-Սէրայ: Ահա այս շրջափակին մէջ է Բուն Իսթանպոլ ըսուածը:

Ուրեմն ճամբայ ելլենք Պողոչէ Գափուի ծովեզերէն դէպ ի հարաւ: Առաջին անգամ կը տեսնենք Սիբեհի իսկիլեսին որ կը

գտնուի Եւրոպ. Թուրքիոյ երկաթուղիներուն մեծ կայարանը: Ասկէց կը դառնանք Սարայ Պուրնիէն և յաջորդաբար Մարմարայի վրայ կը տեսնենք, Տետեալ գլխաւոր թաղերը, Ախր Գափու, որու ծովեզերքը կը գտնուի Փարոս մը: Գում գափու, ուր կը գտնուին Հայոց Պատիարաւանը, Երուսողէմատունը Մայր Եկեղեցին, Պեզնեան և Աղջկանց Լուսաւորչեան վարժարանները: Մայր Եկեղեցիին մէջ կը գտնուին նաև Ներսէս Մեծ Պատրիարքին, Պեզնեան Յարութիւն ամիրայի և Տասեան Պողոս պէյի դամբարանները: Գում Գափուի գուրսը կը գտնուի փոքր թաղ մը, որ ունի Ս. Յարութիւն անունով եկեղեցի և վարժարան: Գում Գաբու իր շրջականերովը՝ Պոլսոյ բազմահայ թաղերէն մէկն է: Յետոյ կուգանք Եհնի գափու և Նարը գափու ծովեզերեայ թաղերը և Սամաթիա: Եէնի Գաբուի մէջ ունինք Ս. Թադիոս և Բարթողիմէոս առաքեալներուն անունով փոքր եկեղեցի մը և թաղային վարժարան: Նոյնպէս՝ Նաուը Գաբուի ծովեզերեայ փոքր թաղին մէջ կայ փոքր եկեղեցի մը Ս. Յովհաննէս Աւեսարանիչ անուն և թաղային վարժարան:

Գում Գաբուի բարձրերը կը գտնուի Կեսիք Փաւա շէն թաղը՝ ուր կան Հայոց Ս. Յովհաննէս Աւեսարանիչ եկեղեցին և Մեսրոպեան վարժարանը:

Գում Գափուէն առաջ, Հայոց Պատրիարքարանը Սամաթիա էր: Սամաթիոյ մէջ կը գտնուին Ս. Գէորգ եկեղեցին և Նունեան - Վարդուհեան վարժարանները: Նոյնպէս, Սամաթիոյ Այրը Մեմեք թաղին մէջ կայ Ս. Յակոբ անուն եկեղեցի մը: Սամաթիաէն ճամբանիս շարունակելով կուգանք Եհնի-Գուլէ: Հոս, բերդէն դուրս կը գտնուին Հայոց նորաշէն Ս. Փրկչեան Հիւանդանոցը, դէպի ծովեզորը՝ Գազլը-Չէշմէի

350 / 16418 - 58  
40

մէջ կը գտնուին: Ս. Յակոբայ Ուրանոցն ու Արեսանոցը: Հոս է նաև Յունաց Ազգ. Հիւանդանոցն ու Որբանոցը: Հիւանդանոցէն կէս ժամու չափ հեռաւորութեամբ կը գտնուի Պալըզլը՝ ուր կան Յունական եկեղեցիէ ի դատ, Հայոց և Յունաց ընդարձակ և որմափակ գերեզմանատունները: Դարձեալ, քաղաքէն դուրս՝ Մարմարայի ծովեզերքը կը գտնուին Մաբի Բեոյ և Սան Սքեֆանօ գիւղերը: Սիբքէճիէն ըսկեսալ մինչև այս վերջին գիւղը՝ երկաթուղի կայ և յիշուած ծովեզերեայ լողոր գիւղերուն մէջ ալ եկեղեցի ու դպրոցներ ունինք: Պոլսոյ պարիսպները ին ատեն գուռներ ունէին՝ որոնց անունով կոչուած են անոնց շրջակայ թաղերը. Ինչպէս՝ Ախր Գափու, Չարլասը գափու, Թօփ գափու, Սիլիվրի գափու, Էհիբնէ գափու, Եյրի գափու, և ին:

Եէտի Գուլէի հիւսիսային կողմը կը գտնուի Թօփ Գափու անուն բարձրադիր և օդատուն թաղը՝ ուր Հայերը ունին Ս. Նիկողոս անուն եկեղեցի մը և թաղային վարժարան:



ԱՅՍ. ՍՕՅԻՍ.

Իսթամպոլի երեւելի շէնքերն են, Եհնի Մամիի՝ Ալասօփիայի, Սուլթան Ահմէտի, Սուլթան Պալադիսի, Նուրը Օսմանիէ,

Ֆարիհի և Սուլթան Սեյիմի հոյակապ մըղկիթները: Սուլթան Ահմէտի հրապարակին մէջ կը գտնուին Եգիպտական կոթող մը, պղնձէ օձաձև սիւն մը և Գերմանիոյ Վիլհէլմ Բ. Կայսեր շինել տուած գեղեցիկ աղբիւրը, Ենիշէրիներու միւղէն: Իսկ դէպի վեր, ճամբուն վրայ կը գտնուի Սուլթան Մահմուտի



ՆՈՒՐՈՔ ՕՍՄԱՆԻ

դամբարանը և Ալբեցեալ սիւնը (Չէմպէրի թաշ): Երեւելի են նաև Սարայ Պուրնուի բարձրերը գտնուած Փոլեբանոցը, Գեղարուեստից վարժարանը, Չիքիլի քէօշկը, Հնութեանց նորաշէն թանգարանները, Թօփ Գափուի պալատը, Պապը Հիւմայուն անուն խիստ փառաւոր դուռը և Սուլթան Ահմէտի աղբիւրը: Յիշուելու արժանի են նաև Բարձրագոյն Գուռը (Պապը Այի)-Արդարաւեան (Սալիյէ), Սպարապետութեան (Սէր Ասքէր), Ելեմսից (Մալիյէ), Հանրօգուտ շինութեանց պաշտօնատունները, Նոր Նամակասուրը, Մեծ Շուկան ևն: Սպարապետութեան հրապարակին մէջ կը գտնուի Եանկըն Բեօեկի անունով գեղեցիկ

աշտարակ մը որ Պոլսոյ ամենէն բարձր շէնքն է և Ղալաթիոյ աշտարակին պէս՝ հրդեհ պատահած ժամանակ, մասնաւոր նշաններով կ'իմացնէ :



ՉԻՆԻԼԻ ՔԵՕՇԿԸ

Ասոնցմէ ի զստ՝ Իսթամբուլի մէջ կը գտնուին բարձրագոյն վարժարաններ, դըրամատուններ (պանքա), հարուստ վաճառատուններ, շուկաներ, խաներ, մեծատուններու փառաւոր ապարանքներ, աղբիւրներ, ջուրի ճամբաներ ևն :

Պոլսոյ կողմն ալ թրամուէյի գիծ մը կայ, որ Պաղլէ Գաբուէն կ'սկսի և Սիրքէճիէն ու Աճի Չէչմէէն դէպ ի վեր բարձրանալով՝ Այա Սօֆիայի և Սուլթան Անմէտի մօտէն կ'երկարի դէպ ի Սուլթան Պայազիա և Տիվան Եօլիէն՝ Աքսէրայ : Հոս, գիծը երկուքը կը բաժնուի, մէկը՝ շարունակուելով կ'երթայ Թօփ Գալու, իսկ միւսը՝ ծովեզերքի ճամբով կ'երկարի մինչև Սամաթիա :

Վոսփորի մէջ կը բանին Եիրեքի խաչքիէի շոգենաւները : Հայտար Փաշա, Գատըքէօյ, Ֆէնէր Պաղլէ, և Նիկոմիդիոյ ծոցին

գիւղերը, ինչպէս նաև Իշխանաց կղզիները կ'երթեւեկեն Մախսուսի շոգենաւները : Ոսկեղջիւրի մէջ ալ փոքր շոգենաւներ կան որոնք էյուպէն սկսեալ՝ դէմ առ դէմ մինչև Ղալաթիոյ կամուրջը գտնուած զիւզերուն մէջ կ'երթեւեկեն :

Կ. Պոլիս ունի 1,000,000է աւելի բնակիչ : Նաւահանգիստը կրնայ 1000 է աւելի վաճառական նաւ պարունակել :



ԵԱՆԿԸՆ ՔԵՕՇԿԻ

Կ. Պոլիս ունի բազմաթիւ ջուրի աղբիւրներէ ի զստ, Տեքօսի ընկերութեան ջուրի ճամբաները : Իսկ վերջին տարիներս, Ղալաթիոյ և Բերայի կողմը Քեաղըտհանէէն սկսեալ՝ շինուեցան ջուրի ճամբաներ ու աղբիւրներ : Իւսկիւտարի և Գատը Գէօյի մէջ ալ անու շջուրի ճամբաներ շինուած են :

Պոլսոյ բոլոր շէն թաղերը՝ գիշերները օդային կաղով ու ելեքարահանութիւնով կը լուսաւորուին :

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Մ Ա Ս

Ե Ի Ր Ո Պ Ա

Դ Ա Ս Ջ.

Երկրորդ դասին մէջ տեսանք որ, Երկիրս հինգ ցամաքներ կը պարունակէ, Եւրոպա, Ասիա և Ամերիկե՝ որոնք կը կոչուին Հին Ասիա, իսկ Ամերիկա և Ովկիանիա՝ Նոր Ասիա :

Ուրեմն սկսինք ասոնց ամէն մէկուն վրայ աւանձին առանձին խօսիլ, Հին Ասիայի հիւսիսային արևմտեան կողմը կը գտնուի ԵԻՐՈՊԱ՝ որու սահմաններն են՝ հիւսիսէն Սառուցեալ Ովկիանոս, արևմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն Միջերկրական ծով, արևելքէն՝ Ուրալ լեռները և Կասպից ծով :

Եւրոպա, հինգ ցամաքներուն ամենէն փոքրը, բայց ամենէն բազմամարդը, ամենէն զօրաւորը և ամեն քաղաքակրթուածն է :

ՄԱՊԼԵՐ. — Սառուցեալ ովկիանոսէն ձևապաճ է Սպիտակ ծովը, իսկ արևմտեան կողմը՝ Ատլանտեան ովկիանոսէն ձևապաճ են՝

Պարթիկ, Հիւսիսային, Մանեի և Իւլանայի ծովերը :

Հարաւային կողմը կայ Միջերկրական մեծ ու կարեւոր ծովը՝ որմէ ձևապաճ են՝ Ադրիական, Յոնիական, Արեփեղազոս, Մարմարա, Սեւ և Ազախու ծովերը : Արև-

ւելեան հարաւային կողմը կը գտնուի Կասպից ծովը որ, թէև լիճ մըն է, բայց շատ մեծ ըլլալուն համար Մոլ կ'ըսուի :

ՆԵՂՈՒՅՆԵՐ. — Եւրոպայի ովկիանոսներուն և ծովերուն միջեւ հետեւալ կարեւոր նեղուցները կը գտնուին .

Մալեբրաք, Քարթեկաք, Սուեճ, Մեծ և Փոքր Պէրս նեղուցները՝ Հիւս. և Պարթիկ ծովերուն մէջտեղ :

Բա-սի-Գալիի նեղուց՝ Հիւս. և Մանչի ծովերուն մէջտեղ :

Ճիպրայարի նեղուց՝ Ատլանտեան ովկիանոսի և Միջերկրականի միջև :


Ադրիական և Յոնիական ծովերուն մէջտեղ կը գտնուի Օքրանքի ջրանցքը :

Մեսինայի նեղուցը կը գտնուի Հարաւային Իտալիոյ և Սիկիլիա կղզիին մէջտեղ :

Արշիպեղազոս և Մարմարա ծովերուն մէջտեղն է Չանաք Գալի կամ Տարսանիի նեղուցը :

Կոստանդնուպոլսոյ կամ Վոսփորի նեղուցը կը գտնուի Սև և Մարմարա ծովերուն մէջտեղ :

Սև և Ազախու ծովերուն մէջտեղն է Կերչի նեղուցը :



Դ Ա Ս Ե.

(Շարունակութիւն)

**ՄՈՅՅԵՐ.** — Պալթիկ ծովէն ձևացած են Պօքնեան, Ֆինլանսեան, Րիկայի և Տանցիկի ծոցերը :

Հիւսիսային ծովուն մէջ կը գտնուի Զուխերգի ծոցը :

Ատլանտեան ովկիանոսէն ձևացած է Կասպնեան ծոցը :

Լիոնի, ձեցուլայի, Տարեցոնի և Վենեսիկի ծոցերը ձևացած են Միջերկրականի ծովէն :

Սելանիկի ծոցը կը գտնուի Արշիպելագոսի մէջ :

**ԿՂՋԻՆԵՐ.** — Եւրոպայի գլխաւոր կղզիներն են՝ Սբիցպիէի և Նոր Զեմպլա սաւնապատ և անմարդաբնակ կղզիները, որոնք կը գտնուին Սաուցեալ ովկիանոսի մէջ :

Իսլանսա, Անգլիա և Իրլանսա՝ մեծ կղզիները՝ Ատլանտեանի մէջ : Եւրլանս՝ Պալթիկ և Հիւս. ծովերուն միջև : Ալանս, Կօրլանս, Լալանս ևն. Պալթիկի մէջ : Միջերկրական ծովին մէջ կը գտնուին Բալթեան արշիպելագոսը : Քոստիսա, Սարսենիա, Սիկիլիա, Մալթա, Կրէսէ, Մօրա և այլն :

Քօրնու, Սանքա—Մալթա, Քեթալոնիա, Զանդա, և Թեաֆի՝ Յոնիականի մէջ, Արշիպելագոսի մէջ ալ շատ մը կղզիներ կան :

**ՔԵՐԱԿՂՋԻՆԵՐ.** — Եւրոպայի մէջ հինգ թերակղզի կայ, չորսը մեծ և մեկը փոքր, Մեծերն են Սեանսիակա (Շուէտ. Նորվեգիա), Պրեկեան (Սպանիա և Փորթուգալ), Ապենինեան (Իտալիա) և Պալֆանեան (Թուրքիա), որոնք շատ մեծ ըլլալուն համար՝ Յամաֆակղզի կ'ըսուին :

Իսկ երկու թերակղզին կը գտնուի Սև

ծովին մէջ՝ որու պարանոցն է Փերեոպի : **ԼԵՌՆԵՐ.** — Եւրոպայի գլխաւոր լեռնաշղթաներն են, Սեանսիակեան լեռներ՝ Շուէտ. Նորվեգիայի մէջ :

Ուրալ՝ Եւրոպայի արեւելեան կողմը : Կովկաս՝ Սև և Կասպից ծովերուն մէջ : Պրեկեան լեռներ՝ Ֆրանսայի և Սպանիայի մէջտեղ :

Ալպեան լեռներ՝ Ֆրանսայի, Իտալիայի, Զուրիցերիցի և Գերմանիայի մէջտեղ :

Ապենինեան լեռները կ'երկարին Իտալիայի հիւսիսէն դէպ ի հարաւ :

Կարպաթ լեռները կը գտնուին Աւստրո-Հունգարիայի մէջ :

Պալան լեռները կը գտնուին համանուն ցամաքակղզիին մէջ :

Եւրոպայի մէջ երեք մեծ հրաբուխ կայ Հէկլա՝ Իսլանսա կղզիին, Եսնա՝ Սիկիլիա կղզիին և Վեսուվի՝ Իտալիայի մէջ :

**ԳՂՋԻՆԵՐ.** — Եւրոպայի գլխաւոր Հրումանոսներն են Նորս—Քին՝ Շուէտի հիւս. կողմը. Ֆինիպիէ՝ Սպանիայի արեւմտեան կողմը և Մարափան, Մօրայի հարաւակողմը :

Դ Ա Ս Ը.

(Շարունակութիւն)

**ՔԵՏԵՐ.** — Եւրոպական ցամաքին գլխաւոր գետերն են Փէլչօրա, որ կը թափի Սաուցեալ Ովկիանոս. — Պալթիկի մէջ կը թափին Նեկլա, Տուցա, Վիստուլա և Օսեր :

Հիւս. ծովը կը թափին՝ Էլբա, Հոնոս, Թամիզ և Էսոֆօ :

Սեւ գետը Ֆրանսայէն Մանչի մէջ կը թափի :

Ատլանտեանի մէջ կը թափին Լուատ,

Կարօն, Թալօ և Կուսաստանի զեանքը :  
 Էպրօ, Ռօն և Տիբեթիս կը թափին Մի-  
 ջերկրականի մէջ :  
 Աղբիական կը թափին Բօ և Ասիոն :  
 Արշակունիս կը թափին՝ Վարսար և  
 Մարիցա :  
 Դանուբ, Տիբեթ և Տիբեթիս զեանքը  
 Սև ծով կը թափին :  
 Տօն կը թափի Ազախու ծովը :  
 Վոլկա և Ուրալ մեծ զեանքը կը թա-  
 փին Կասպից ծով :  
 Արձաթ. — Եւրոպայի մեծ լիճերն են,  
 Լասօկա, Օնեկա, Իլիեն և Բելքուս՝ Ռու-  
 սիոյ մէջ :  
 Վեներ, Վեբեր և Սեյար՝ Շուէտի մէջ :  
 Մանիօթե, Կօնօ և Կարսա՝ Իտալիոյ մէջ :  
 Ճիւնկա, Նեոսարեյ, Յուրիս և Լու-  
 չեոնա զեանքի լիճերը՝ Զուրիցիոյ, Իսկ  
 Պալարուն՝ Աւստրիոյ մէջ :  
 Եւր. Թուրքիոյ մէջ կը գտնուին՝ Շեո-  
 սալի, Օլսիսալի, Կանեալի, Պեթիկի և  
 Թափնոսի լիճերը :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞ր կը գտնուի Եւրոպա : — Այս ցամաքին վրայ  
 գիտնալու այ ժանի ի՞նչ կայ : — Եւրոպա քանի՞ ուղ-  
 կանոս կը տեսնէ : — Սառուցեալ և Ատրանտան ուղ-  
 կիսա ունեւն ի՞նչ ծովեր ձևացած են : — Միջերկրա-  
 կան էն որո՞նք : — Եւրոպայի զլիսուր ծոցերը որո՞նք  
 են : — Եւրոպայի երկու ուղիսանոսն ուն և ծովերուն մէջ  
 ինչ կարեւոր կղզիներ կան : — Քանի՞ ցամաքակղզի  
 կայ : — Միակ թերակղզին և պարսոնքը որն է : —  
 Ինչ կարեւոր շուկագոտիներ կան Եւրոպայի մէջ : —  
 Քանի՞ հրուանդան կայ : — Եւրոպայի մէջ քանի՞ հրա-  
 բուխ կը գտնուի : — Եւրոպական ցամաքին զլիսուր  
 զետեքը որո՞նք են և ո՞ր կը թափին : — Ո՞ր ել կիր-  
 ներու մէջ մեծ լիճեր կը գտնուին :

Դ Ա Ս Թ .

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Եւրոպայի հար. կողմը կայ .....  
 մեծ ծովը :  
 Ատլանտեանի մէջ կը գտնուին .....  
 կղզիները :  
 Հիւս. ծովը կը թափին .....  
 զեանքը :  
 Շուէտի և Ռուսիոյ մէջ կան .....  
 լիճերը :  
 Եւրոպայի արեւել. կողմը կը գտնուի  
 .....  
 լեռնագոտին :  
 Եւրոպայի ամենէն մեծ հրուանդանն  
 է ..... :  
 Ատլանտեանը Միջերկրական ծովին մի-  
 ապա՞ծ է ..... :  
 Սպանիոյ և Ֆրանսայի միջև կը գտնուի  
 .....  
 լեռնագոտին :  
 Ֆրանսայէն Մանչի ծովը կը թափի  
 .....  
 գետը :  
 Յանիականի մէջ կը գտնուին .....  
 կղզիները :

ՀՐԱՀԱՆԳ

Ո՞ր ծովն ձևացած են Պոմբոյ, Ֆինլանդիայի,  
 Բելիայի և Տանցիկի ծոցերը :  
 Ո՞ր կը գտնուին Ճիւնկաթի, Քոստանցիայի, Նեոլա-  
 թիի և Լուչեոնայի լիճերը :  
 Ֆրանսայէն, Փորթոկալէն և Սպանիայէն ո՞ր զետեքը  
 Ատլանտեան կը թափին :  
 Յիշէ՛ Եւր. Թուրքիոյ մէջ գտնուած լիճերը :  
 Եւրոպայի մէջ ո՞ր հարբուխներ կան :  
 Ո՞ր կղզիները սառնապատ և անմարդաբնակ են :

Աւստրո-Հունգարիոյ մէջ ո՞ր լիճը կայ :  
 Արկան լեռները ո՞ր երկրներու սահմանին վրայ  
 կը գտնուին :

Դ Ա Ս Ժ .

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍ

ԵՒՐՈՊԱ. ունի 1,900,000 քառակ. քի,  
 լամէթր տարածութիւն, այնպէս որ Ասիան  
 4 անգամ և Արիկէն 3 անգամ փոքր է :  
 Եւրոպայի բնակիչներու թիւը 414 միլիոնի  
 չափ է, որոնց մեծագոյն մասը Քրիստոնե-  
 աւ, մէկ մասը Մանիսական և փոքր  
 մասն ալ հրեայ է :

Եւրոպայի բնակիչները կը բաժնուին  
 երեք մեծ ընտանիքներու, 1. — Լատինա-  
 կան, 2. — Գերմանական, 3. — Սլաւա-  
 կան :

Լատինները ընդհանրապէս կարողիկ,  
 Գերմանները՝ բողոքական և Սլաւներ Յու-  
 նադաւան են :

Եւրոպայի տէրութիւններուն քաղա-  
 քական ձևը ընդհանրապէս սահմանադրա-  
 կան միապետութիւն է : Միայն Ֆրանսա  
 և Զուրիցիի հանրապետութիւն են :

Եւրոպայի կլիման ընդհանրապէս բարե-  
 խառն է. բայց հիւսիսային կողմերը ցուրտ  
 և անբեր են, հարաւային կողմն ալ տաք է :  
 Հողը աղէկ մշակուած է՝ որով առատ բոյ-  
 սեր յառաջ կուգան, ինչպէս ցորեն, գարի,  
 եղիպտացորեն, հաճար, վարսակ, որթա-  
 տունկ, ձիթենի, ծխախոտ, բամբակ, գետ-  
 նախնածոր, պղպատու ծառեր կայն :

Հանքերու կողմանէ ալ շատ հարուստ է  
 Եւրոպա : Ունի երկաթի, հանքածուխի,  
 զինկի, արծաթի, կապարի, պղնձի, ծը-

ծումբի, սնդիկի և մարմարի հանքեր՝  
 որոնք կը շահագործուին : Եւրոպայի մէջ  
 ամէն տեսակ ընտանի կենդանի կայ, նոյն-  
 պէս կը գտնուին մուշտակաւոր կենդանի-  
 ներ՝ ցուրտ երկրներու մէջ :



ԲԱՄՊԱԿ



ՎԱՐՍԱԿ



ԳԵՏՆԱԽՆՁՈՐ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրոպա բաժնուած է 20 տէրութիւն-  
 ներու :

Հիւս. մասին մէջ կը գտնուին 5 տէ-  
 րութիւններ, Մեծն Բրիտանիա, Տանրմա-  
 րա, Շուէս, Կոնկիսիա և Ռուսիա :

Կեդրոնական մասին մէջ կը գտնուին  
 Ֆրանսա, Զուրիցիա, Պելիսիա, Հոլան-  
 Կա, Գերմանիա և Աւստրո-Հունգարիա :

Հար. Եւրոպան կը պարունակէ Սլա-  
 վիա, Փորթոկալ, Իսպիա, Եւր. Թուրքիա,


Ռուսանիա, Սերպիա, Գարաապ, Պուլկա-  
րիա և Յունաստան :

Դ Ա Ս Ժ Ա .

**ՀԻՒՍ. ԵՐԿԻՐՆԵՐ**

**ԱՆԳԼԻԱ ԿԱՄ ՍԵՇՆ ԲՐԻՏԱՆԻԱ**

Անգլիա ունի 42 միլիոն բնակիչ : —  
Մայրաքաղաքն է ԼՈՆՏՈՆ որ աշխարհիս



ԼՈՆՏՈՆ

ամենէն մեծ քաղաքն է : Գլխաւոր քաղաք-  
ներն են Էքսթըր, Տրային , Մանչեսթը,  
Լիվըրքուլ, Կլասկո, Բորքամուք ևն :

**ՇՈՒԷՏ**

Այս երկիրն ունի 5 միլիոն բնակիչ :  
Մայրաքաղաքն է ՍՔՕԲՀՈՂՄ : Գլ. քա-  
ղաքներն են Կոփենպուրկ , Ուփսալա ,  
Քալմաո :

**ՆՈՐՎԷԿԻԱ**

Բնակչաց թիւն է 2 1/2 միլիոն : Մայրա-

քաղաքն է ԲՐԻՍՏՈՆԻԱ : Գլ. քաղաք-  
ներն են Տրոնդհայմ, Պերկեմ :

Շուէտ և Նորվեգիա՝ միասին կը կոչուին  
ՍՔԱՆՏԻՆԱԻԱ :

**ՏԱՆՄԱՐՔԱ**

Տանրմարքա ունի 2 1/2 միլիոն բնակիչ :  
Մայրաքաղաքն է ՔՕՓԷՆՀԱԿ : Գլ. քա-  
ղաքներն են Ալպորկ և Հէլսինկու :

**ՌՈՒՍԻԱ**

Եւրոպայի կէսէն աւելի բնդարձակ այս  
երկիրը ունի 107 միլիոն բնակիչ : — Մայ-  
րաքաղաքն է Մ. ԲԵԴԵՐՍՊՈՒՐԿ : Գլ.  
քաղաքներն են Մոսկուա, Վարաւիա,  
Րիկա, Օսկա, Քիեվ, Աժսերլսան ևն :

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ**

**ՖՐԱՆՍԱ**

Ֆրանսա ունի 39 միլիոն բնակիչ : Մայ-  
րաքաղաքն է ԲԱՐԻՉ : Գլ. քաղաքներն  
են Լիոն, Մարսիլիա, Պորսո , Լը-Հավը,  
Օրլան, Գրեսու, Շերպուը , Նանց ևն :

**ՊԵՂՃԻՔԱ**

Այս երկիրն ունի 7 միլիոն բնակիչ :  
Մայրաքաղաքն է ՊՐԻՒՔՍԷԼ : Գլ. քա-  
ղաքներն են Անվերս, Կանս, Լիեժ , Պրուժ :

**ՀՈՒԱՆՏԱ**


Ունի 5 1/2 միլիոն բնակիչ : Մայրաքա-  
ղաքն է ԼԱ-ՀԷ : Գլ. քաղաքներն են Ամբս-  
քերսամ, Ռոքերսամ, Ուբրէլս :

**ՉՈՒՅԵՐԻ**

Չուիցերի ունի 3 1/2 միլիոն բնակիչ : —  
Մայրաքաղաքն ՊԷՐՆ : Գլ. քաղաքներն  
են ձիւնկլա, Պալ, Յուրիլս, Նիոսպէլին :

**Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա**

Ունի 60 միլիոն բն. — Մայրաքաղաքն  
է ՊԷՐՂԻՆ . Գլ. քաղաքներն են Տրեզսա,  
Միւնիխ, Շրուքլար, Համպուրկ , Բոլո-



ՀԱՄՊՈՒՐԿ

նիա, Լայպձիկ , Ֆրանկֆուրթ, Տանցիկ,  
Քիլ ևն :

**ԱՒՍՏՐՕ-ՀՈՒՆԳԱՐԻԱ**

Ունի 48 միլիոն բնակիչ : — Մայրա-  
քաղաքն է ՎԻԷՆՆԱ : Գլխաւոր քաղաք-  
ներն են Փեզա, Թրիեսթ, Բրախա, Լին-  
պերկ, Պրիւն ևն :

Դ Ա Ս Ժ Բ

**ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՐԿԻՐՆԵՐ**

**Ս Պ Ա Ն Ի Ա**

Ունի 18 միլիոն բնակիչ : Մայրաքա-  
ղաքն է ՄՍՏՐԻՏ : Գլխաւոր քաղաքներն


են Պարչիլոնա . Վալենցիա , Սեվիլ , Մա-  
լակա , Բասիս :

**ՓՈՐԹՈԿԱԼ**

Ունի 5 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն  
է ԼԻՉՊՈՆԱ . Գլ. քաղաքներն են Օ՛Բոր-  
դո՛ Բոխպար :

**Ի Տ Ա Լ Ի Ա**

Ունի 30 միլիոն բնակիչ : Մայրաքա-  
ղաքն ՀՈՒՄ : Գլխաւոր քաղաքներն են



ՎԵՆԵՏԻԱ

ձեռուլա, Վենեսիկ, Նափոլի, Միլանո,  
Թուրին, Անֆոնա ևն . :

**ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ**

Գեղեցիկ և հարուստ երկիր մ'է Եւր-  
թուրքիա, որու վրայ զիչ մը վերջը ա-  
ռանձին և աւելի բնդարձակ կերպով պի-  
տի խօսինք :

**Ռ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա**

Ունի 6 միլիոն բնակիչ : Մայրաքաղա-  
քն է ՊՈՒՔՐԷՇ : Գլխաւոր քաղաքներն  
են Նաւ, Կալաց, Սուլինա, Քիոսթեննէ :

Ս Ե Ր Պ Ի Ա

Ունի 2 1/2 միլիոնէ աւելի բնակիչ : Մայրաքաղաքն է ՊէլկրՍ : Գլ. քաղաքներն են Նիւ, Սեմեմիա :

ԳԱՐՍԱՆՂԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Եւրոպայի ամենէն փոքր ու լեռնային երկիրն է : Ունի 300,000 բնակիչ : Մայրաքաղաքն է Չիթիւնէ : Գլ. քաղաքներն են Բոսկորիցա, Նիֆոլի :

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ունի 3 1/2 միլիոն բնակիչ, Մայրաքաղաքն է ՍՕՅԻԱ : Գլ. քաղաքներն են Բուսնուզ, Վառնա, Վիսիւն, Ֆիլիպի, Պուրկազ, Թաքաւ Փազարնիզ, Էն :

Յ Ո Ւ Ն Ա Ս Տ Ա Ն

Ունի 2 միլիոնէն աւելի բնակիչ : Մայրաքաղաքն է Աթէնք, Գլ. քաղաքներն են Պիրեոն, Բաքա, Կորնթոս, Լարիսա, Էայն :

Դ Ա Ս Ժ Գ

ԸՆԴՀ. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե Ի Ր Ո Պ Ա Յ Ի Վ Ր Ա Յ

Եւրոպայի մէջ առատ արմտիք ունեցող երկիրներն են՝ Եւր. Թուրքիա, Ռուսիա, Ռումանիա, Պուլկարիա, Ֆրանսա, Աւստրիա :

Գիւնի կ'արտադրեն՝ Ֆրանսա, Եւրոպ. Թուրքիա, Իտալիա, Մաճառիստան, Սպանիա, Յունաստան :

Հանճածուխ ունին՝ Անգլիա, Պելճիքա, Գերմանիա, Ֆրանսա :

Չեռագործ եւ անարուքիւն շատ ծաղկած են՝ Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Պելճիքայի, Աւստրիոյ և Իտալիոյ մէջ :

Եւրոպայէ դուրս ընդարձակ կալուածներ ունին՝ Ռուսիա, Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, Հոլանտա, Փորթոկալ և Պելճիքա :

Եւրոպայի յառաջադէմ երկիրներուն մէջ կը գտնուին՝ երեւելի համալսարաններ, պալատներ, թանգարաններ, փառաւոր եկեղեցիներ, թատրոններ, հասարակաց պարտէզներ, գործարաններ, կամուրջներ, երկաթուղիներ, հանրակառքեր, ևլն. :

Ե Ի Ր Ո Պ Ա Յ Ի Ա Մ Ե Ն Է Ն Ե Ր Ե Ի Ե Լ Ի

Ն Ա Ի Ա Հ Ա Ն Գ Ի Ս Տ Ն Ե Ի Ն Ե Ն

Բիկա, Տանցիկ, Սքոֆուլ և Քիլ՝ Պալթիկի վրայ :

Համպուրկ, Ամսթերսամ, Անվերս և Լոնսոն՝ Հիւսիսային ծովուն վրայ :

Քալէ և Տուվր՝ համանուն նեղուցին վրայ :

Լը-Հալբ և Բորքսմոք՝ Մանչի վրայ : Լիվերուլ և Տրայլին՝ Իրլանտայի ծովին վրայ :

Կլասիօ, Պրեքս, Երայուր, Պորսօ, Նանդ, Լիզպոնա և Քասիֆա՝ Ատլանտեանի վրայ :

Ճիպրայթաւ, Մալակա, Վալենցիա, Պարչելոնա, Մարսիլիա, Ճեկովա և Նափոլի՝ Միջերկրականի վրայ :

Բալեարձօ և Մեաիւնա՝ կը գտնուին Սիկիլիա կղզիին մէջ :

Անֆոնա, Վենեսիկ և Թրիեսթի՝ Ադրիականի վրայ :

Կորնթոս, Պիրեոն, Սեյանիկ, Տեքս - Աղան՝ Արշեպեղադոսի վրայ :

Ռոսոբօ կամ Թեֆիր-Տաղ և Կելիպոլու՝ Մարմարայի վրայ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ՝ համանուն նեղուցին վրայ :

Պուրկազ, Վառնա, Քեօսթեքեք, Սուլինա, Կալաց և Օսեա՝ Սև ծովուն վրայ :

Աստիսան կամ Ամսթրիսան՝ Կասպից ծովուն վրայ կը գտնուի :

ՊՈՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Իտալիոյ մայրաքաղաքն է ..... — Պրիւքսէլ՝ մայրաքաղաքն է .....

Ի : — Անգլիոյ մայրաքաղաքն է ..... : — Ս. Բէթէրսպուրկ ..... մայրաքաղաքն է : —

Աւստրիոյ մայրաքաղաքն է ..... : — Մարիտ մայրաքաղաքն է .....

: — Ռ'րն է Հոլանտայի մայրաքաղաքը ..... : —

Եւրոպայի Հիւսիսային երկիրներն են : .....

Կեդրոնական կամ միջին երկիրներն են .....

Հարաւային երկիրներն են .....

Քարտէսին վրայ ցոյց տուր Եւրոպայի ամենէն ընդարձակ երկիրը, ամենէն ընդարձակ երկիրը, ամենէն մեծ ծովը, ամենէն մեծ լիճը, ամենէն մեծ գետը, ամենէն երկար լեռնագօտին, ամենէն մեծ կղզին, թերակղզին, ամենէն լեռնային երկիրը, բնաւ ծով չտեսնող երկիրները :

Հիւս. և Պալթիկ ծովերը ո՞ր երկիրներուն սահմանակից են : Ատլանտեան ուլ-

կիանոսը ո՞ր երկիրները կը թրջէ : Որո՞նք են Միջերկրականի սահմանակից երկիրները :

Մանչէսթըր կը գտնուի ..... մէջ : — Մոսկուա ..... մէջ : —

Ամսթէրսամ ..... մէջ : — Կորնթոս ..... մէջ : — Վալենցիա .....

մէջ : — Նափոլի ..... մէջ : — Պորսօ ..... : Ճինէվրա .....

մէջ : — Թրիէսթէ ..... մէջ : — Լիօն ..... մէջ : — Անվերս .....

մէջ : — Կոթէնպուրկ ..... մէջ : —

ՌՈՒՄԻԱ. Ասիոյ մէջ ունի Կովկաս, Սիպերիա և Թաքաիստանի մեծ մասը :

ԱՆԳԼԻԱ ունի Հնդկաստանը, Հնդկա-Չինի մէկ մասը (Պիրմանիա), Հոնկ-Քոնկ, Սեյլան կղզին և Չինաստանի մէջ փոքրիկ գաւառ մը :

ՖՐԱՆՍԱ ունի Փոնթիքերի և Չանսեր-Գակոր մեծ քաղաքները Հնդկաստանի մէջ : Թոնիֆին գաւառը Հնդկաստանի մէջ :

ՓՈՐԹՈԿԱԼ ունի Տիու և Կօա քաղաքները Հնդկաստանի և Մալաո՝ քաղաքները Չինաստանի մէջ :

ՕՍՄ. ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ունի Ասիական Թուրքիա և Արաբիա ու Հիւս. Ափրիկէի մէջ ալ՝ ընդարձակ երկիրներ :

1. — Աշխարհի ամենէն մեծ քաղաքն է .....

2. — Եւրոպայէ դուրս ընդարձակ կալուածներ ունին .....

3. — Սև ծովու մէջ կը գտնուի ..... թերակղզին :

4. — Գանուր գետին բերանը կը գտնուի ..... նաւահանգիստը :

5. — Գետերու վրայ կամ բերանը չինուած են հետեւեալ մայրաքաղաքները .....

6. — Եւրոպական Թուրքիոյ ամենէն մեծ նաւահանգիստն է .....

- 7. — Միջերկրականի ամենէն մեծ կղզին է .....
- 8. — Թերակղզիի ձևով աչքութիւններն են .....
- 9. — Բոլորովին կղզիէ ձևացած են .....
- 10. — Եւրոպայի երեք հրաբուխներն են .....
- 11. — Եւրոպայի մէջ բնաւ ծով չտեսնող երկիրներն են .....
- 12. — Մէկէ աւելի ծով տեսնող երկիրներն են .....

ՄՏԱԻՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Յրանսայի Պոնտ քաղաքէն ուխտաւորներ՝ ծովու ձամբով երուսաղեմ պիտի

երթան: Կ'ուղենք դիտնալ թէ՛ շողենաւը այս ուղևորութեան առթիւ ո՞ր ովկիանոսէն, ծովերէն ու նեղուցներէն պիտի անցնի, ի՞նչ կղզիներ, երկիրներ ու նաւահանգիստներ պիտի տեսնէ՛ մինչև որ երուսաղեմի նաւահանգիստը՝ նաճա հասնի:

Եւրոպայի ամենէն բազմամարդ քաղաքներն են՝ Լոնսոն, Բարիզ, Պերից, Վիեննա, Ս. Բեքե սպուրկ, Կ. Պոլիս, Մոսկուա, Կլասիօ, Պուսարեք. ևն:

Ամենէն մեծ լիճերն են՝ Լասօկա, Օճեկա, Վեներ, Բեյբուս, Վեքեր. Մելար, Իլմեն. ևն:

Ամենէն երկայն գետերն են՝ Վոլկա Գանուբ, Տօն, Փէջօրա, Ուրալ, Հոննոս, Տուրնա, Էլպա, Վիսրուլա, Տնիքեր, Լուառ ևն:



Ա Ս Ի Ա

Դ Ա Ս Ժ Դ.

Հին աշխարհի արևելեան կողմը կը գտնուի ԱՍԻԱ՝ որու սահմաններն են հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոս, արևելքէն՝ Խաղաղական ովկիանոս, Հարաւէն՝ Հնդկաց ովկիանոս և արևմուտքէն՝ Միջերկրական, Կարմիր և Կասպից ծովերն և Ուրալ լեռները: Ասիա՝ հինգ ցամաքներէն ամենէն մեծն է:

ՏՈՎԵՐ ՈՒ ՏՈՅԵՐ. — Ասիան չը-

ջապատած են՝ Միջերկրական, Սեւ. Մարմարա, Արեւադագոս, Կարմիր և Կասպից ծովերը՝ արևմտեան կողմէն: Օլտոցի Դեղին, ձաբոնի, Չինաց և Պեհլիկայի ծովերը կը գտնուին արևելեան կամը և ձևացած են Խաղաղական ովկիանոսէն:

Ասիայ գլխաւոր ծոցերն են Օպի ու Եեհիսեյ՝ Սառուցեալ ովկիանոսի մէջ: Անասիւրի, Բեյիլի, Թօնիլի և Սիամի ծոցերը՝ Խաղաղական ովկիանոսէն ձևացած

են: Պէնկալայի Օմանի և Պարսկային մեծ ծոցերը Հնդկաց ովկիանոսէն ձևացած են:

ՆԵՂՈՒՅՆԵՐ. — Ասիայ ծովերուն և ովկիանոսներուն միջև հետեւեալ նեղուցները կան: — Կ. Պոլսոյ նեղուց՝ Սև և Մարմարա ծովերուն մէջտեղ: Տարսանեյի նեղուց՝ Մարմարայի և Արշիպեղազոսի միջև: Սուեզի ջրանցք՝ Միջերկրականի և Կարմիր ծովուն մէջտեղ: Պապիւլ-Մանսեպի նեղուց՝ Կարմիր ծովուն և Հնդկաց ովկիանոսին մէջտեղ: Հիւսիսեւրոպայի նեղուց՝ Պարսկային ծոցին և Հնդկաց ովկիանոսին մէջտեղ: Մալաքայի նեղուց՝ Հնդկաց և Խաղաղական ովկիանոսներուն մէջտեղ: Գորեայի նեղուց՝ Չինաց և Ճարոնի ծովերուն մէջտեղ: Պեհլիկայի նեղուց՝ որով կը միանան Խաղաղական և Սառուցեալ ովկիանոսները:

Դ Ա Ս Ժ Ե.

ԳԵՏԵՐ. — Ասիայ գլխաւոր գետերն են Օպի, Եեհիսեյ ու Լեւա՝ որոնք կը թափին Սառ. ովկիանոս: Ամուր, Հօանկ-Հօ կամ Դեղին, Քեանկ կամ Կապոյս, Քամպօն և Մեհալ կը թափին արևելեան աւազանը, այսինքն Խաղաղական ովկիանոս: Պրանմափուբրա, Կոսովերի, Գանգես և Ինդոս կը թափին Հնդկաց ովկիանոս: Եփրատ և Տիգրիս՝ Պարսկային ծոցը կը թափին: Կուր և Երասխ՝ կը թափին Կասպից ծով: Սև ծովու մէջ կը թափին Չիւրիւխ Սու, Եեհիլ Ըրմաֆ, Գրզըլ Ըրմաֆ և Սաֆարիա: Արալայ ծովին մէջ կը թափին Սիհուն և ձիհուն:

ԼԻՋԵՐ. — Ասիայ ամենէն մեծ լիճերն են Արալ, որ շատ մեծ ըլլալուն համար ծով կ'ըսուի: Սեւանայ լիճ՝ Կովկասի մէջ: Վանայ լիճ՝ Ասիական Թուրքիոյ մէջ: Ուրմիլոյ լիճ՝ Պարսկաստանի մէջ: Պայնալ և Պայնաւ կը գտնուին Միսիսիոյ մէջ:

ԼԵՈՒՆԵՐ. — Ասիա ունի մեծամեծ լեռնագօտիներ որոնք են, Ուրալ լեռներ՝ Եւրոպայի և Ասիոյ մէջտեղ: Կովկաս՝ Սև և Կասպից ծովերուն մէջտեղ: Արարատ, Տօրոս, Անիսօրոս, Հիբանան՝ Թուրքիոյ մէջ: Ալթայ՝ Միսիսիոյ մէջ: Հիմալայա՝ Հնդկաստանի և Չինու մէջտեղ: Հիմսուֆուտ՝ Պարսկաստանի և Աֆղանիստանի հիւսկողմը:

ԿՂՁԻՆԵՐ և ԹԵՐԱԿՂՁԻՆԵՐ. — Խաղաղականի մէջ կը գտնուին Մախային և Ճափոնական կղզիները: Հնդկաց ովկիանոսին մէջ կը գտնուին Սեյլան, Լաֆեսիլեան, և Մալաքիան կղզիները:


Արշիպեղազոսի մէջ կան Հոնոնոս, Մամոս, Քիոս, Միսիլի և ուրիշ փոքր կղզիներ: Ասիա ունի եօթը թերակղզի. Քամպօրա և Քորեան՝ արևելեան կողմը: Արաբիա, Հնդկաստան, Հնդկա-Չին և Մալաքա հարաւային կողմը: Փոքր Ասիա կամ Անասոլու՝ արևմտեան կողմը:

Դ Ա Ս Ժ Զ.

Ինչպէս որ տեսանք, Ասիա հինգ ցամաքներուն ամենէն մեծն է: Հիւսիսային կողմերը տափարակ ու սաստիկ ցուրտ կ'ընէ. միջին մասերուն մէջ՝ տեղ տեղ ընդարձակ անապատներ կը գտնուին և օդն ալ բարեխառն է: Իսկ հարաւային կողմերը ընդհանրապէս լեռնային են և սաստիկ տաք կ'ընեն:

Ասիոյ հողը թէև բարեբեր, բայց աղէկ մշակուած չ'է:

Տաք երկիրներուն մէջ յառաջ կուգան շաքարեղէգ, խահուէ, բամպակ, ծխախոտ, արմաւ, բրինձ, համեմունք, խնկեղէն, դեղի վերարբերեալ բոյսեր, պանան, լեղակ և այլն:



Ասիոյ բառեխառն երկիրներու բոյսերն են՝ ալմախիք, թէյ, թթենի, ձիթենի, որթատունկ, թուզ, ափիոն, ծխախոտ, բանջարեղէններ, պտղատու և շինութեան փայտի ծառեր, ևն :

Կան— Ո՞ր գետերը կը թափին Արալ և Կասպից ծովերը : — Խաղաղական ովկիանոսին մէջ ի՞նչ կըղզիներ կան : — Ասիա ո՞ր նեղուցով բաժնուած է Ամերիկայէ և որով Ափրիկէէ : — Ասիոյ ամենէն մեծ գետերը ո՞ր կը թափին : — Օսմ. Ասիոյ երկու մեծագոյն գետերը որո՞նք են : — Արշիպեղազոսի մէջ ո՞ր կղզիներ ըկան : — Եւրպայի և Ասիոյ մէջտեղ ո՞ր լեռնագոտին կը գտնուի : — Պայքալ և Պայքալ լիճերը ո՞ր երկրին մէջ են : — Եփրատ և Տիգրիս ո՞ր կը թափին : — Հիմալայա լեռները ո՞ր երկրին սահմանին վրայ կը գտնուին :



ԲՐԻՆՁ

ԹէՅ

Ասիոյ հիւսիսային և միջին երկիրներուն մէջ կը գտնուին ընտանի կենդանիներ, ինչպէս կով, ոչխար, այծ, ձի, ուղտ և շորի : Իսկ տաք երկիրներու մէջ կան վայրի գազաններ, օձ, կոկորդիլոս, թունաւոր միջատներ, ևն : Սիպերիոյ մէջ կը գտնուին մուշտակաւոր կենդանիներ : Ասիոյ մէջ ամէն տեսակ հարուստ հանքեր կը գտնուին, ինչպէս՝ ոսկի, արծաթ, բըլաթին, թանկագին քարեր, պղինձ, երկաթ, կապար, անագ, հանքածուխ, քարիւղ, նաւթ, ևն : Սակայն այս հարուստ հանքերուն մեծ մասը դեռ չչահագործուիր :

Ասիա ունի 44 միլիոն քառ. ջրլուծէթը ընդարձակութիւն և 800 միլիոն բնակիչ՝ որոնք ընհանրապէս կը պատկանին Կովկասեան և Մոնղոլեան ցեղերուն : Ասոնց կրօնքն է Քրիստոնեութիւն, Մանմեհականութիւն և մեծ մասն ալ Կուպաթէ :

Ասիա բաժնուած է 12 տէրութիւններու :

Հիւսիսային Ասիոյ երկիրն է.

**Ս Ի Պ Ե Ր Ի Ա**

Որ թէև Եւրոպայէն աւելի մեծ է, բայց հազիւ 6 միլիոն բնակիչ ունի, որովհետև սաստիկ ցուրտ կ'ընէ և սառնապատ է : Գլխ. քաղաքներն են Թոպոլսք, Օրենպուրկ, Նիխոլայեվսք, Վլասիլօսքով և Իրուքսն :

**Ա.րեւելեան Երկիրներ**

**Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն**

Աշխարհիս ամենէն բազմամարդ երկիրն է. ունի 490 միլիոն չափ բնակիչ, այսինքն

Գ Ա Ս Ժ Է.

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Ասիա քանի՞ ովկիանոս կը տեսնէ : — Խաղաղականէն ո՞ր ծովերը ձևացած են : — Հնդկաց ովկիանոսէն ո՞ր ծոցերը : — Ո՞ր գետերը Սառուցեալ ովկիանոս կը թափին : — Ասիա ի՞նչ ցամաքակղզիներ



ԱՍԻՈՅ ՄԵՋ ՏԵՍԱՐԱՆ

Եւրոպայի ունեցածէն աւելի : Մայրաքաղաքն ֆէֆրն : — Գլխ. քաղաքներն են Թիենձին, Քանքոն, Նանքին, Հոնկ-Քոնկ և Մաֆա :



ՉԻՆԱՅԻ ԻՇԻԱՆ

Ճ Ա Բ Ո Ն

Ունի 48 միլիոն բնակիչ :— Մայրաքաղաքն է ԵՏՕ : Գլ. քաղաքներն են Եօֆուամա, Օսաֆա, Նակազաֆի :

Դ Ա Ղ Ս Ժ Թ .

Հ Ա Ր . Ե Ր Կ Ի Ր Ն Ե Ր

Հ Ն Դ Կ Ա - Չ Ի Ն

Ունի 40 միլիոն բնակիչ : Այս երկիրը քանի մը իշխանութիւններու կը բաժնուի որոնց Գլխ. քաղաքներն են Մանսալի, Բանկուն, Սինկափուր, Պանտօֆ, Հուէ, Սայկօն ևն :

Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն

Այս հարուստ երկիրը կը պատկանի Անգլիոյ, և ունի 300 միլ. ի չափ բնակիչ :

Մայրաքաղաքն է ԿՍԼԿՍԹԱ : Գլխաւոր քաղաքներն են Պոմպայ, Մասրաս, Քալիֆուք, Լաիօն, Պենարես, Տէրի, Փօնիփեքի Չանսերնակոր, Քաւիք, ևն :

Պ Ե Լ Ո Ւ Ճ Ի Ս Տ Ա Ն

Փոքր երկիր մըն է, ունի 1 միլիոն բնակիչ : Գլ. քաղաքն է Քեյաք :

Ա Ր Ա Բ Ի Ա

Անապատային մեծ ցամաքակղզի մըն է : Ունի 10 միլիոնի չափ բնակիչ : Բաժնուած է երկու կուսակալութիւններու՝ Հիմազ և Ենմեն . Գլ. քաղաքներն են Մեֆէ, Մեփնէ, ձիսսէ, Ասեն, և այլն : Արարիա կը պատկանի Օսմ : Պետութեան :

Ա Ր Ե Ի Մ Տ Ե Ա Ն Ե Ր Կ Ի Ր Ն Ե Ր

Կ Ո Վ Կ Ա Ս

Ունի 9 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է ԹիֆլիՉ : Գլ. քաղաքներն են Պաֆու, Փօքի, Երեւան, Կարս և Պարուս :

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն


Ունի 9 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է ԹէՀՐԱՆ : Գլ. քաղաքներն են Իսպահան, Շիրազ, Իււրեթ :

Ա Ֆ Ղ Ա Ն Ի Ս Տ Ա Ն

Ունի 5 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է ՔԱՊՈՒԼ : Գլ. քաղաքներն են Հեքաք, և Քանսահար :

Թ Ո Ւ Ր Ք Ս Ս Տ Ա Ն Կ Վ Թ Ա Թ Ա Ր Ի Ս Տ Ա Ն

Անապատային երկիր մըն է՝ որուն մեծ մասը Ռուսիոյ կը պատկանի : Ունի 8 միլիոն բնակիչ : Գլ. քաղաքներն են Սմբղանս, Պուխարա, Թաւկենս, Խիվա, Մերվ, և այլն :



ՉԻՆԱԿԱՆ ԱՇՏԱՐԱԿ

Դ Ա Ս Ի .

ԱՍԻՈՅ ՎՐՍՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ասիոյ մէջ առատ և բնափր թէյ կ'արտադրեն Չինաստան, Ճափոն և Հնդկա-Չին : Բրինձ և մետաքս կ'արտադրեն Չինաստան, Ճափոն, Հնդկա-Չին և Հնդկաստան : Խնկիզէն և համեմունք ունին Արաբիա, Հնդկաստան, Հնդկա-Չին : Հարուստ հանքեր ունին Օսմ. Ասիա, Կովկաս, Սիպրիս, Հնդկա-Չին, Հնդկաստան, Պարս-

կաստան, Չինաստան: Թանկագին քարեր կը գտնուին Հնդկաստանի, Պարսկաստանի Թաթարիստանի մէջ: Տեղական ձեռագործ և ճարտարութիւններ զարգացած են Կովկասի, Ճափոնի, Հնդկաստանի, Չինաստանի, Պարսկաստանի մէջ:

Ասիոյ ամենէն քաղաքակրթուած և յառաջադէմ երկիրն է Ճափոն:

Նաւթի և քարիւղի հսանքեր ունի Կովկաս: — Ընտիր գորգեր կը շինուին Օսմ. Ասիոյ, Կովկասի, Պարսկաստանի, Հնդկաստանի և Թուրքաստանի մէջ:

Ճափոնները, Չինացիք, Հնդկա-Չինու բնակիչք և Հնդկիկներուն մեծ մասը կուպաշտ են:



ՅՄԱԼԱՅԵԱՆՅԵՂ

Գրիտոնտեաներ կը գտնուին Օսմ. Ասիոյ, Կովկասի և փոքրիկ մաս մըն ալ Չինու, Հնդկաստանի և Սիպրիոյ մէջ:

Մեծ թիւով Մանձուտականներ կը գրտնուին Օսմ. Ասիոյ, Արաբիոյ, Թաթարիստանի, Աֆղանիստանի, Պելուճիստանի, Հնդկաստանի, Պարսկաստանի և Չինաստանի մէջ:

Ասիոյ մէջ ընդարձակ և հարուստ կալուածներ ունին՝ Անգլիա, Ռուսիա և Ֆրանսա:



Դ Ա Ս Ի Ա.

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ասիոյ ամենէն բազմամարդ երկիրներն են .....

Ասիոյ մէջ քիչ բնակիչ ունեցող երկիրներն են .....

Ասիոյ անապատային երկիրներն են .....

Ասիոյ ամենէն լեռնոտ երկիրներն են .....

Ընդարձակ գետեր ունեցող երկիրներն են .....

Ասիոյ ամենէն ցուրտ երկիրն է .....

Ասիոյ ամենէն տաք երկիրներն են .....

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Ո՞րն է Ասիոյ ամենէն ընդարձակ երկիրը, ամենէն մեծ ծովը, ամենէն մեծ լիճը, գետը, ծոցը, լեռնագօտին, ցամաքակղզին, կղզին: Ո՞ր երկիրներուն սահմանակից են Խաղաղական, Հնդկաց և Սառուցեալ Ովկիանոսները: Ասիոյ ո՞ր երկիրները բնաւ ծով չ'են տեսներ: Ո՞ր երկիրը կղզիներէ կազմուած է: Թերակղզիի ձևով երկիրները որո՞նք են: Հնդկաց ովկիանոսը թափող մեծ գետերը որո՞նք են: Խաղաղականը, Սևը, Պարսկայի՞ն ծոցը: Ասիա ի՞նչ նեղուցներով բաժնուած է Եւրոպայէ: Որոնցմով Ափրիկէէն, Ովկիանիայէ և Ամերիկայէ: Ասիոյ ամենէն յարգի բոյսերը որո՞նք են և ո՞ր երկիրներուն մէջ յառաջ կուզան:

ԱՍԻՈՑ ԱՄԵՆԷՆ ԵՐԵՒԵԼԻ ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏՆԵՐՆ ԵՆ

Պարուլ, Տրապիզոն, Սաւսոն, Սինոպ,

Ինկայու՝ Սև ծովու վրայ: Պանսրմա՝ Մարմարայի վրայ:

Չանաբ-Քալէ՝ համանուն նեղուցին վրայ: Իզմիր՝ Արշիպեղազոսի վրայ:

Ասալիա, Մեքսիկ, Իսկեսներուն, Թրիփոլի, Պէրուք, Եաֆա՝ Միջերկրականի վրայ:

Ճիսսէ և Ասէն՝ Կարմիր ծովուն վրայ: Պասրա՝ Պարսկային ծոցին վրայ:

Պոմպայ, Քալիփոք, Փոնթիքերի, Մասրա, Չանսերնակոր, Կալկարա և Մալաբա՝ Հնդկաց ովկիանոսին վրայ:

Սինկափուր, Սայկոն, Հոնկ-Բոնկ, Քանդոն, Շանկ-Հայ, Թիէն-Չիէն, Վլաիվիսոպոֆ, Նիփոլայեվսկ, Եօֆոնամա, Նակասափի և Քիոզո՝ Խաղաղականի վրայ կը գտնուին:

ՀՐԱՀԱՆԳ

Ասիոյ մէջ Յամաքակղզիի ձևով ո՞ր

տէրութիւնները կան. — Ո՞րն է ամենէն հիւսիսային, ամենէն հարաւային, ամենէն արեւելեան և ամենէն արեւմտեան երկիրը. — Ո՞րն է բոլորովին կղզիներէ ձևացած տէրութիւնը. — Ասիա ո՞ր նեղուցով բաժնուած է Ամերիկայէ, որոնցմով Ափրիկէէն, որով Եւրոպայէ և ո՞ր նեղուցով Ովկիանիայէ:

Ասիոյ ամենէն բազմամարդ քաղաքներն են՝ Քանդոն, Փէֆին, Թոֆիօ, Թիէն-Չիէն, Կալկարա, Պոմպայ, Օսաբա, Շանկ-Հայ, Նանիլն, Մասրա, Հայսերապաս:

Ամենէն երկայն գետերն են՝ Եանկ-Յեթեանկ, Հօհանկ-Հօ, Լեւա, Քամպօն, Ամուր, Օպի, Ենիսէյ, Ինիքոս, Պրահմափուրա, Եփրատ, Գանգես, Տիգրիս:

Ամենէն մեծ լիճերն են՝ Կասպից ծով, Արալ, Պալքալ, Պայքաօ, Համուն, Ոււսիա, Վան և Մեւեալ ծով:



Ա Փ Ր Ի Կ Է


Դ Ա Ս Ի Բ.

Ափրիկէ կը գտնուի Հին Աշխարհի հարարեւմտեան կողմը: Սահմաններն են հիւսիսին՝ Միջերկրական ծով, ձիպրալթարի նեղուց և Սուէզի ջրանցք: Արեւելքէն՝ Կարմիր ծով և Հնդկաց ովկիանոս. Հարաւէն և արեւմուաքէն՝ Ատլանտեան ովկիանոս:

ՄՈՑԵՐ ԵՒ ՆԵՂՈՒՅՆԵՐ. — Միջերկրական ծովէն ձևացած են Սիբրի և

Կապէսի ծոցերը: Ատլանտեանէ կազմուած է Կուրիկոյ մեծ ծոցը: Արեւելեան կողմը կը գտնուի Ասէնի ծոցը: Միջերկրականի և Ատլանտեանի մէջտեղ կը գտնուի ձիպրալթարի նեղուցը: Միջերկրական և Ատլանտեանի մէջտեղ կը գտնուի Սուէզի ձեռագործ ջրանցքը: Պապիլ-Մանսէպի նեղուցը կը գտնուի Հնդկաց ովկիանոսին և Կարմիր ծովուն մէջտեղ:

ԳԵՏԵՐ. — Ափրիկէ ունի երեք աւազան: 1. — Միջերկրական ծով՝ ուր կը



ԱՓՐԻԿԵՒ ՄԷՋ ՏԵՍԱՐԱՆ

Թափի Նեղոս՝ մեծ ու կարևոր գետը : 2. — Ատլանտեան ովկիանոս՝ ուր կը թափին Մենեկալ, Կամպիա, Նիկե, Զաիրե, Քոնկո և Օրենն : 3. — Հնդկաց ովկիանոսը կը թափին Զամպեզ, Լեմբոփո և Բուվուսա :

Ափրիկէ ունի ընդարձակ լեռներ, Զաս հիւսիսային մասին մէջ : Վիքտորիա-Նիանգա, Թանկանիա, Ալպերզ, Պենկուելա, Նիասսա և այլն. միջին արևելեան մասին մէջ :

ԼԵՈՆՆԵՐ ԵՒ ԳԼՈՒԽՆԵՐ. — Ափրիկէի լեռնագօտիններն են Ադլաս հիւս. կողմը, Քոնկ լեռներ՝ արևմտեան կողմը, Սեուենի կամ Երովպիոյ լեռներն ունի երկրին մէջ : Լուբարթա լեռինը՝ հարաւային կողմը : Քելիան և Քիլիման-Նեմարո՝ արևելեան հարաւային կողմը :

Ափրիկէի չորս գլխաւոր գլուխներն են Պոն՝ Հիւս. կողմը :

Բաբելոնոյ գլուխ՝ հարաւ. կողմը. Գա-

լաբի գլուխ՝ արևմտեան կողմը. Կուարսա-Ֆուրի գլուխ՝ արևելեան կողմը :


Ափրիկէի գլխաւոր կղզիները հետեւեալներն են :

Ատրեան, Քանարեան. Մասքա և Դալարի Գլխոյ արշիպելագոսներէն իզատ՝ Ս. Հեդիեն, Համբարձման, Իսլանի և Ս. Թովմաս կղզիները՝ Ատլանտեան ովկիանոսին մէջ :

Սոֆորա, Սեեկեան, Մօրիս և Մասակաւաւոր մեծ կղզին՝ Հնդկաց ովկիանոսին մէջ :

Ափրիկէ ունի 39,000,000 քառակուսի քիլոմէտր տարածութիւն, որ ըսել է՝ Եւրոպայէ երեք անգամ աւելի մեծ է :

Հինդ ցամաքներուն մէջ ամենէն ընդարձակ անապատներ պարունակողը Ափրիկէն է : Կլիման ալ սաստիկ տաք է, միայն հիւսիսային և հարաւային կողմերը քիչ մը բարեխառն են : Հողը թէև բարե-



ԱՓՐԻԿԷ  
Մասիւն 1 60 000 000  
0 100 200 300 կմ

բեր. բայց աղէկ մշակուած չէ: Գլխաւոր բերքերն են բրինձ, բամպակ, արմաւ, շաքարեղէն, պղպեղ. խէժ, խնկեղէն խանութ, ցորեն, որթատունկ, նարինջ, լեմոն և ուրիշ մրգեղէններ:



ԼԵՂԱԿ



ՊՂՊԵՂ

Ափրիկէի ընտանի կենդանիներն են ուղտ, եղ, կով, ջորի, ոչխար և այծ, որոնք կը գտնուին բարեխառն երկիրներու մէջ: Իսկ անապատային տաք երկիրներու մէջ ամէն տեսակ վայրի գազաններ, օձեր և թռչնաւոր ձճիներ կը վխտան:

Ափրիկէ շատ հարուստ հանքեր ունի երկաթի, պղնձի, աղի ու սպիտակ և հարաւային կողմն ալ՝ ադամանդ կը գտնուի:

Դ Ա Ս Ի Գ.

Ափրիկէ ունի 200 միլիոնի չափ բնակիչ որոնք այլ և այլ ցեղերէ բաղկացած են: Մեծագոյն մասը կուսապաշտ և վայրենի է: Մահմէտականները կը գտնուին Նիւսիասային, կեդրոնական և արեւելեան երկիրներուն մէջ: Իսկ քրիստոնեաները փոքր թիւ մը կը կազմեն:

ՀՐԻՍՏՈՍԱՅԻՆ ԱՓՐԻԿԷ

ԵԳԻՊՏՈՍԻ ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ  
Ունի 9 միլիոն բնակիչ և Ափրիկէի ա-

մենէն հարուստ և ծաղկեալ երկիրն է: Մայրաքաղաքն է Գ.Ա.Հ.Ի.Թ.է: Գլխաւոր քաղաքներն են Ալեքսանդրիա, Սուէզ, ԲոնՍաիս, Տամիէր ևն.:

Ն Ո Ւ Պ Ի Ա.

Կը վերաբերի Եգիպտոսի: Գլ. քաղաքն է Խարբուլ:

ԵԹՈՎՊԻՍ. կամ ՀՍՊԵՇԻՍՏԱՆ

Ունի 5 միլիոն բնակիչ: Մայրաքաղաքն է ԱՏԻՍԱՊՍՊՍ: Գլ. քաղաքներն են Աբսամ, Թիկրէ ևն.:

Պ Է Ր Պ Է Ր Ի Ս Տ Ա Ն

Ունի 16 միլիոնի չափ բնակիչ և կը բաժնուի 4 մասերու:

ԹԱՐԱՊՈՒԼՈՒՍ

Թուրքիոյ կը վերաբերի: Ունի 1,000,000ի չափ բնակիչ Գլխաւոր քաղաքներն են Թարապուլուս և Պենկազի:

ԹՈՒՆՈՒՉ

Ունի 2,000,000 բնակիչ: Գլխաւոր քաղաքներն են Թունուզ, Պիզերքա, Բերուրան:

ԱԼՃԷՐԻ կամ ՃԷՋԱՅԻՐ

Ունի 4,500,000 բնակիչ: Գլխաւոր քաղաքներն են Ալժէ. Օրան, Պօն, Կոստանդին: Վերջին երկու երկիրները կը վերաբերին Յրանսայի:

Մ Ա Ր Ո Ք

Ափրիկէի ամենէն հիւս. երկիրն է: Ունի 8 միլիոն բնակիչ: Գլխ. քաղաքներն են Մարօֆ, Ֆէս, Թանգեր, Մոկասոր:

ՍՍ.ՀԱՐՍ. կամ ՄԵԾ ԱՆԱՊՍ

Կը գտնուի Պերպերիստանի հարաւ-կողմը և է աշխարհիս ամենէն ընդարձակ



ՄԱՐՈՔՅԻ

անապատը: Իր մէջ կան Թուար, Թիպպու, Թիսիֆէ, Պիլմա և Թական բարեբեր ովասիաները:

ՄԻՋԻՆ ԱՓՐԻԿԷ

Ս Ո Ւ Տ Ա Ն

Այս ընդարձակ երկիրը կը գտնուի Սահարայի հարաւային կողմը: Ունի 5 միլիոնի չափ բնակիչ: Գլխ. քաղաքներն են Թուպուրու, Ուիսան, Պօրնու, Բօրօօօան, Տարօուր, Սեկու, Սօֆօ ևն.:

ՍԵՆԵԿԱՄՊԻԱ

Ափրիկէի ամենէն արեւմտեան երկիրն է, ունի 10 միլիոնի չափ բնակիչ: Գլխ. քաղաքներն են Սեն-Լուի, Ճօրնսպուս, Պարբրս:

ՀԻՍՍԻՍԱՅԻՆ ԿՈՒՒՆԻԱ

Այս երկիրը կը բաժնուի քանի մը մա-

սերու որոնց կարեւորները Եւրոպացիներուն ձեռքն են: Գլ. քաղաքներն են Ֆրիքաուս, Մոնրավիա, Կրան-Պասամ, Բէյլի-Բօրս, Փօրթօ-Նօլօ ևն.:

Ս Օ Մ Ա Լ

Ափրիկէի ամենէն արեւելեան երկիրն է: Ունի 5 միլիոնի չափ բնակիչ: Տեղացիները կը պատկանին Սօմալի կոչուած ցեղին Գլ. քաղաքներն են Չէյլա, Պերպերա, Մակասօքսօ:



ԿԱՐԱՒԱՆ

Դ Ա Ս Ի Գ.

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒՒՆԻԱ

Այս երկիրը բաժնուած է երկու մասերու. 1 — Ֆրանսական Բօնիօ և Անկոլայի երկիր որ կը պատկանի Փորթոկալի: Այս երկիրները ունին բուսական և հանքային հարստութիւններ: Ֆրանսական Բոնկոյի գլխաւոր քաղաքներն են Լիպոլովիլ, Ֆրանսովիլ, Պրաձձավիլ և Լօանկօ: Անկոլայի գլխաւոր քաղաքներն են Սեն-Բօլ-սը-Լօանսա, Պենկուէլա և Մոսամեսես:

ՊԵԼՃԻԱԿԱՆ ՔՕՆԿՕ

Ֆրանսական Բօնկոյի արեւել. ու հար. կողմը կը գտնուի այս ընդարձակ երկիրը:

Ունի 15 միլիոնի չափ բնակիչ : Գլխաւոր քաղաքներն են Լեոբոսվիլ, Տաւան և Պոմա :

ՀԱՐ. ԱՓՐԻԿԷ

Ափրիկէի ամենէն հարաւային երկիրն է Քաբ կամ Բարեյուսոյ երկիրը : Ունի 2 միլիոնի չափ բնակիչ : Գլխաւոր քաղաքներն են Քափ, Բոնք-էլիզապէթ, Կոսանդրիան և այլն :

Թրանսվալ, որու գլխ. քաղաքն է Բրեքորիա : Օրէնճի գլ. քաղաքն է Պլոեմօնթայն :

Հարաւ. Ափրիկէի մէջ կը գտնուին Ջուլուեբու և Օթեմբացոց երկիրները, Քաթրասան և Անգլիական Նաթալ : Այս վերջինին գլ. քաղաքներն են Բոն-Նաթալ և Բիեթե-Մարիմպուրի :

Քափ, Թրանսվալ, Նաթալ, Օրեկն, Քաթրասան կը կազմեն Հար. Ափրիկէի Անգլիական միացեալ հանրապետութիւնը :

ՕԹԷՆԹԱՅԻՈՑ ԵՐԿԻՐ

Այս երկրին բնիկները կռապաշտ և վայրենի սեւամորթներ են : Քաղաք չունին և կ'ապրին խրճիթներու մէջ :

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՓՐԻԿԷ

Մ Ո Ջ Ա Մ Պ Ի Ք

Ունի 2 1/2 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է Մոզամպիբ : Գլ. քաղաքներն են Բիլիմանե և Սոֆալա :

Չ Ա Ն Կ Է Պ Ա Ր

Ունի 1 միլիոնէ աւելի բնակիչ : Մայ-

րաքաղաքն է Ջանգիպար • Գլխ. քաղաքներն են Մեյկես և Պակամոյո :

Դ Ա Ս Ի Ջ

ԸՆԴՀ. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա Փ Ր Ի Կ Է Ի Վ Ր Ա Յ

Ափրիկէ՝ երկրիս ՚ինգ ցամաքներուն ամենէն տաքն է : Անապատներու մէջ աւազային սոսկալի մրրիկներ կը պատահին : Անանկ երկիրներ կան՝ ուր շարունակ 5—6 ամիս անձրև կը տեղայ : Անապատներուն մէջ ուղտերով կը ճամբորդեն և ապրանք կը փոխադրեն, որովհետև այս կենդանին երկար ատեն յոգնութեան և ծարաւի չատ կը դիմանայ : Ափրիկէի գետերուն մէջ ամենէն կարևորն է Նեղոս՝ որ տարին մէկ



ԱՐՄԱՒԵՆԻ

անգամ յորդելով՝ շրջակայ դաշտերը կ'արգասաւորէ : Ափրիկէի ամենէն յարգի բերքերն են սակիի փոշի, աղամանդ, Չայլամի փետուր, վայրի գազաններու մորթեր, փղոսկր, շինութեան աղնիւ փայտ, բամ-

պակ, արմտիք, արմաւ, բուրդ, գունատու նիւթեր, խէժ և լն • :

Ափրիկէի մէջ ընդարձակ երկիրներ ունին, Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, Պելճիքա և Փորթոկալ : Ափրիկէի եւրոպական երկիրներու բնակիչները հետզհետէ քաղաքակրթուելու վրայ են :

ԱՓՐԻԿԷԻ ԵՐԵՒԵԼԻ

ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏՆԵՐՆ ԵՆ

Միջերկրականի վրայ՝ Բոն-Սախա, Ալեքսանդրիա, Թարապուլուս, Պիզէրթա, Ալժէ և Օրան :

Ատլանտեանի վրայ կը գտնուին՝ Թանճէր, Մոկատոր, Ֆրիթաուն, Բէյր-Քորս, Ս. Բոլ-տը-Լօանտա, Պէնկուէլա և Քափ :

Հնդկաց ովկիանոսին վրայ կը գտնուին Բոն-Նաթալ, Լորէնցո-Մարքուէզ, Սոֆալա, Բիլիմանե, Մոզամպիբ, Մէլէնտ և Մակաուքսո : Կարմիր ծովու վրայ են Մասովա, Սուաբիա և Սուէզ :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ափրիկէի հիւս. կողմը ո՞ր լեռնագօտին կայ.— Ափրիկէի Ի՞նչ հրուանդանով կը վերանայ.— Ատլանտեան ծափող երկու մեծ գետերը որո՞նք են.— Սուտանի մէջ ո՞ր մեծ լիճը կայ : — Միջերկրականի ո՞ր ծոցերը ձևացած են : — Որո՞նք են Ափրիկէի չորս գլխաւոր հրուանդանները : Ո՞րն է Ափրիկէի ամենէն մեծ ծովը, ծոցը, լիճը, գետը, կղզին, լեռնագօտին, և ամենէն հարուստ երկիրը : — Ազամանդ ո՞ր երկրին մէջ կը

գտնուի : — Հնդկաց ովկիանոսի սահմանակից երկիրները որո՞նք են : — Ատլանտեանը որ երկիրները կը տեսնեն : — Եգիպտոս և Պերպէրիստան ո՞ր մեծ ծովին սահմանակից են : Պերպէրիստանը կազմող երկիրները որո՞նք են : — Ափրիկէի կեդրոնական մասին մէջ ո՞ր լիճերը կան : — Աշխարհիս մեծագոյն անապատը ո՞րն է և անոր մէջ ո՞ր ովկայանները կան : — Հասարակածի տակ ո՞ր երկիրները կը գտնուին : — Ափրիկէի երեւել նաւահանգիստները որո՞նք են :

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1. Ափրիկէի մեծագոյն մասը ..... է :
2. Ափրիկէ՝ Եւրոպայէ ..... անգամ ..... և Ասիայէ ..... անգամ ..... է :
3. Ափրիկէ Եւրոպայէ բաժնուած է ..... ի նեղուցով : Ասիայէ՝ ..... ջրանցքով և ..... նեղուցով :
4. Ափրիկէի ամենէն լեռնոտ երկիրն է ..... :
5. Պերպէրիստան կը կոչուին ..... երկիրները :
6. Ափրիկէի ամենէն մեծ գետերն են ..... :
7. Նեղոս կ'անցնի ..... երկիրներէն :
8. Քօնկօ » ..... »
9. Նիկէր » ..... »
10. Ափրիկէ գլ. բոյսերն են ..... :
11. » ..... Ընտանի կենդանիներն են ..... :
12. Ափրիկէի վայրի գազաններն են ..... :
13. Հասարակածի տակ կը գտնուին ..... երկիրները :

# Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Դ Ա Ս Ի Ջ.

ԱՄԵՐԻԿԱ, որ կը կոչուի նաև Նոր Աւելաբն, կը գտնուի Արևմտեան կիսագունասին մէջ և բաժնուած է երկու մասերու՝ ՀիթՍ. ԱՄԵՐԻԿԱ և ՀԱՐ. ԱՄԵՐԻԿԱ՝ որոնք միացած են Բանտոնայի պարանոցով:

Սահմաններն են հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոս, արևելքէն՝ Ատլանտեան ովկիանոս, հարաւէն՝ Հար. Սառուցեալ ովկիանոսի և արևմուտքէն Սառուցեալ ովկիանոս:

**ՃՈՂԵՐ ՈՒ ԾՈՅԵՐ.** — Ատլանտեան ովկիանոսէն ձեւացած են Պաֆֆինի և Անքիլիան ծովերը, Սառուցեալ ովկիանոսէն Պեհրինկայի ծովը:

Ամերիկայի գլխաւոր նեղուցներն են՝ Հոլստրէի և Սեն-Լուանի ծոցերը՝ Ատլանտեանի մէջ: Մեխիկայի, Հոնսուրասի և Մարախայայի ծոցերը՝ Անթիլեան ծովուն մէջ: Կոլաբիի, Քալիֆոնիայի և Բալաուի ծոցերն՝ Սառուցեալ ովկիանոսի մէջ:

**ՆԵՂՈՒՅՆԵՐ.** — Ամերիկայի մէջ հետեւեալ նեղուցները կը գտնուին:

Պեհրինկայի նեղուց՝ Սառուցեալ ովկիանոսէն մէջտեղ որ Ասիան Ամերիկայէն կը բաժնէ: Ատլանտեան ովկիանոսին և Անթիլեան ծովուն մէջտեղ կը գտնուի Յիթիսայի նեղուցը:

Հար. Ամերիկայի հար. կողմն է Մակելլանի նեղուցը:

**ՊԵՏԵՐ ԵՒ ՂԻՃԵՐ.** — Ամերիկա ունի երեք աւազան, Սառուցեալ ովկիանոս՝ ուր կը թափին Մախլուզի, Նելսոն և Ալպանի:

Սեն-Լուան կը թափի Ատլանտեան: Միսսիսիպի և Միսուրի մեծ գետերը և Րիօ-Կրան կը թափին Մեքսիկայի ծոցը:

Օրինօֆո, Ամազոն, Ռոֆանքին և Լա-Բլաքա՝ Հար. Ամերիկայէն կը թափին Ատլանտեան:

Սառուցեալ ովկիանոսի մէջ կը թափին Նուֆոն, Օրեկոն, Քոլումպիա և Րիօ-Քոլորասո:

Հիւս. Ամերիկայի մէջ հետեւեալ կարևոր լիճերը կը գտնուին, Մեծ Արշ, Գերեաց, Աքապասա, Ունիքէկ, Աղի լիճ և Նիֆա-րակուա: Հարաւային Ամերիկայի մէջ կը գտնուին հետեւեալները՝ Մարախայայո, Թիքիֆաւա և Լու-Բարոս:

Դ Ա Ս Ի Է.

(Շարունակութիւն)

**ԿՂՁԻՆԵՐ և ՔԵՐԱՂՁԻՆԵՐ.** — Նոր Աշխարհի գլխաւոր կղզիներն են.

Կրեոնլա սա՝ մեծ ու սառնապատ կղզին՝ Սառուցեալ ովկիանոսին մէջ: Դարձեալ, Սառուցեալ ովկիանոսին մէջ կը գտնուին սառնապատ և անբնակ քանի մը կղզիներ:

Ատլանտեանի մէջ կը գտնուին Նոր երկիր, Լոնկ-Ալլըն, Պեհրուսեան, Լուֆայեան, Մեծ և Փոքր Անքիլեան արշիպելագոսները:

Սառուցեալ ովկիանոսի մէջ կը գտնուին Զիլօք և Կալափակոս կղզիները՝ Հար. Ամերիկայի արևմտեան կողմը:



Հ Ի Ւ Ս. Ա Մ Ե Ր Ի Կ Ա Տ Ի Մ Է Ջ Տ Ե Ս Ա Ր Ա Ն

Հրոյ երկիր և Մալուինեան արշիպելագոսը՝ Հարաւ. Ամերիկայի հար. կողմը: Սառուցեալ ովկիանոսի մէջ կան նաև Ալեուքեան, Թագուհի Շարթօր և Վանգուլի կղզիները:

Հիւս. Ամերիկա ունի վեց թերակղզի, Լապրասար, Ալասա, Նոր Սկոտլան, Ֆրիլանս, Քալիֆոնիա և Նուֆարան՝ Հիւս. Ամերիկայի մէջ: Հար. Ամերիկայի մէջ թերակղզի չկայ:

**ԼՆՈՒՆԵՐ և ՀՐԱՐՈՒԻՆԵՐ.** — Ամերիկայի գլխաւոր լեռնագոտիներն են՝ Ապալաչի արշիպելագոսի հիւսիսէն դէպի հարաւ կ'երկարի: Հիւս Ամերիկայի մէջ կը կոչուի Ապալաչ, Կեղր. Ամերիկայի մէջ Քոնսիլեան և Հար. Ամերիկայի մէջ Անսեան կամ Անսեգ գոտի:

Ամերիկա, հինգ դամաքներուն մէջ աւանդէն շատ հարուստ ունեցողն է: Գրուխաւորներն են՝ Ս. եղիա, Աննկակուա, Փիլիպիկա, Արեգրիա, Քոքոփաֆոի և այլն: Ամերիկայի գլխ. հրուանդաններն են՝ Ֆեռուէլ՝ Կրոէնյանտայի հար. ծայրը:

Ս. Ղուկաս՝ Քալիֆոնիայի հար. կողմը: Սեյալը՝ Նոր Սկոտլանի հար. կողմը: Գլուխ Հորն՝ Ամերիկայի ամենէն հար. ծայրը:

Դ Ա Ս Ի Ը.

Ամերիկա Նոր Աշխարհի ամենէն մեծ ու կարևոր մասը կը կազմէ: Ունի 42 միլիոն քառակուսի քիլոմէթր տարածութիւն և 145 միլիոնէ աւելի բնակիչ՝ որոնց մեծ մասը Եւրոպայի այլեայլ երկիրներէն գաղթած է: Կլիման, հիւս. կողմը սաստիկ ցուրտ է, միջին մասերը տաք և մնացած մասերը բարեխառն են:


Ամերիկայի հողը շատ բարեբար է և կ'արտադրէ սուստ և յարգի բոյսեր. ինչպէս, արմտիք, բրինձ, եգիպտացորեն, հաճար, վարսակ, Մանսոֆա, գետնախնձոր, գարի, ծխախոտ, ֆոֆո, վանիլիա, պանան, չաքարեղէգ, բամպակ, բինա, խահուէ, լեզակ, ներկի և բժշկական բոյսեր:

պտղատու ծառեր , շինութեան ազնիւ փայտ ևն . :



ՔԻՆՔԻՆԱ

Ամերիկայի բարեխառն երկիրուն մէջ կը գտնուին՝ Եւրոպայէ տարուած ամէն տեսակ ընտանի կենդանիներ : Տաք երկիրներու մէջ ալ վայրի գազաններ կը գտնուին :



ՎԱՆԻԼԻՆԱ

Ամերիկա շատ հարուստ է հանքերու մասին : Առատօրէն կը գտնուին հանքածուխ , քարիւղ , արծաթ , ոսկի , աղամանդ , երկաթ , պղինձ , ծծումբ , սնդիկ , բլադին ևայն :

Դ Ա Ս Ի Թ .

**ԱՄԵՐԻԿԱՅԻ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Ամերիկայի մէջ կան 14 տէրութիւններ , 3ը Հիւսիսային և 11ը Հարաւային Ամերիկայի մէջ :

Ամերիկայի բոլոր տէրութիւններուն կառավարութեան ձեւը Հանրապետութիւն է : Հիւսիսային երեք աշխարհներն են .

**ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ**

ԿԱՄ

**Ն Ո Ր Բ Բ Ի Տ Ա Ն Ի Ա**

Ունի 5 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է Օթթաւա : Գլ . քաղաքներն են Քեպեք և Մոնրեալ : Այս երկիրը կը պատկանի Անգլիոյ :

**ՄԻԱՅԵԱԼ ՆԱԳԱՆԳ**

Ամերիկայի ամենէն հարուստ , բազմամարդ և քաղաքակրթուած երկիրն է : Ունի 78 միլիոն բն . Մայրաքաղաքն է ՈՒԱՇԻՆԿԹՈՆ : Գլ . քաղաքներն են Նիու-Եորք , Պոսթրն , Ֆիլադելֆիա , Նոր-Օրլեան , Սան-Ֆրանչիսկո՝ որ սոսկալի երկրաշարժէ մը կործանեցաւ , Պալթիմոր , Չիքախօ . Ս . Հաւի , Րիչմոն ևն . :

Միացեալ Նահանգներու մէջ կը գտնուի կարևոր Հայ գաղթականութիւն մը որ գլ . քաղաքներու մէջ եկեղեցիներ հիմնած և հաւատարիմ մնացած է իր կրօնքին , լեզուին , ազգութեան և հայրենիքին :

**Մ Ե Ք Ս Ի Կ Ա**

Ունի 13 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է Մեքսիկո : Գլխաւոր քաղաքներն են Վերա-Կրուզ , Քամբէչ և Մազալիսան :

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ**

Բաղկացած է 5 հանրապետութիւններէ . 1. — ԿՈՒՍԹԻՄԱԼԱ : Մայրաքաղաքն է Կուաքեմալա : 2. — ՍԱՆ-ՍԱԼՎԱՏՈՐ : Մայրաքաղաքն է Սան-Սալվատօր : 3. —





ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ՀՕՆՏՈՒՐԱՍ, մայրաքաղաքն է Քոնայա-կուա : 4. — ՆԻՔԱՐԱԿՈՒՍ, մայրաքաղաքն է Մանակուա : 5. — ՔՕՄԴԱՐԻՔԱ, մայրաքաղաքն է Սան-ձօզէ : Կեդրոնական Ամերիկա ունի 3 միլիոնի չափ բնակիչ :

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Դ Ա Ս Լ

Հար. Ամերիկայի 11 աշխարհներն են :

Ք Ո Լ Ո Մ Պ Ի Ա

Ունի 6 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է ՊՕԿՈԹԱ : Գլ. քաղաքներն են Փանամա և Կարթագինե :

Վ Է Ն Է Ց Ո Ի Է Լ Լ Ա

Ունի 2 1/2 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է ՔԱՐԱՔԱՍ :

Կ Ո Ւ Յ Ա Ն Ա

Կր բաժնուի երեք մասերու Գլ. քաղաքներն են ձօրես.Թաուն, Քա Էնա և Փարամարիպօ : Կուլյանա ունի կէս միլիոն բնակիչ :

Պ Ր Ա Ջ Ի Լ Ի Ա

Հարաւային Ամերիկայի ամենէն մեծ երկիրն է : Ունի 16 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է ՐԻՑ-ԵԱՆԷՅՐՕ : Գլխ. քաղաքներն են Սանդոս, Սան-Սալվատօր, Բարա, Էայն :

Է Ք Ո Ւ Ա Թ Ո Ր

Ունի 1 1/2 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է ՔԻԴՕ : Գլ. քաղաքներն են Կուլյաբիլ և Քուանսա :

Բ Ե Ր Ո Ւ

Ունի 4 1/2 միլիոն բնակիչ : Մայրաքա-

ղաքն է ԼԻՄԱ : Գլ. քաղաքներն են Քալաօ և Քուլցօ :

Պ Օ Լ Ի Վ Ի Ա

Ունի 2 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է ՉՈՒՔԻՍՍԱՔԱ : Երեւելի է նաև Լա-Փազ :

Բ Ա Ր Ա Կ Ո Ւ Ա

Ունի 600,000 բնակիչ : Մայրաքաղաքն է ԱՍՕՄԲՍԻՕՆ :

Ո Ի Ր Ո Ւ Կ Է

Ունի 900,000 բնակիչ : Մայրաքաղաքն է ՄՕՆԹԷՎԻՏԷՕ :

Չ Ի Լ Ի

Ունի 3 1/2 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է ՍԱՆԹԻԱԿՕ : Երեւելի է նաև Վալբարեգօ նաւահանգիստը :

Լ Ա Բ Լ Ա Դ Ա Կ Ա Մ Ա Ր Ճ Է Ն Թ Ի Ն

Ունի 5 միլիոն բնակիչ : Մայրաքաղաքն է ՊՈՒԷՆՈՍ-ԱՅՐԷՍ, Երեւելի են նաև Բօգարթօ և Սանթիակօ :

Փ Ա Թ Ա Կ Օ Ն Ի Ա

Հար. Ամերիկայի հարաւային ծայրը անբեր և ապառաժուա երկիր մըն է զոր Չիլի և Արձէնթին իրենց մէջ բաժնեցին :

Մեքսիկայի ծոցին արեւելեան կողմը կը գտնուի ԱՆԹԻԼԵԱՆ կարևոր արշիպելագոսը որ երկու մասերու կը բաժնուի՝ Մեծ Անթիլեաներ և Փոքր Անթիլեաներ : Հար-

քի, Եամաիքա և Փօրթօ-Րիֆօ՝ կը կազմեն Մեծ Անթիլեաները : Փոքր Անթիլեաներուն մէջ կը գտնուին Կուասալուփ, Մաքիմիֆ որ հրաբուխէ մասամբ կործանեցաւ, Մանդա-Լուիզա, Լե-Սենդ, Քիւրասաօ որոնք կը պատկանին Անգլիոյ, Ֆրանսայի և Հոլանտայի :

Դ Ա Ս Լ Ա

Ը Ն Դ Ջ. Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Ք Ի Ի Ն Ե Ն Ե Բ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎՐԱՅ

Ամերիկան զտաւ Քրիստափոր Գոլումպոս անուն ճննողացի նաւապետը 1492ին : Ամերիկայի բնիկները կը կոչուին Հնդիկ՝ որոնք հետզհետէ քաղաքակրթուելու վրայ



ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՆԻԿ

են՝ Եւրոպացի գաղթականներու ձեռքով : Ամերիկայի բնակիչներուն գրեթէ ամենքն ալ քրիստոնեայ են : Ամերիկայի մէջ ընդհանրապէս խօսուած լեզուներն են Անգլիերէն և Սպանիոլերէն : Ամերիկայի ամենէն քաղաքակրթուած, հարուստ և զօրաւոր երկիրն է Միացեալ Նահանգները՝ ուր արուեստ, ճարտարութիւն, առևտուր շատ ծաղկած են : Անթիլեան կղզիներուն, Մեքսիկայի, Կեղք. և Հարաւ. Ամերիկայի մէջ շատ անգամ երկրաշարժ կը պատահի : Ա-

մերիկայէն դուրս զրկուած ամենէն յարգի վաճառքներն են՝ բամբակ, խահուէ, շաքարեղէգ, ծխախոտ, ցորեն, ներկի նիւթեր, շինութեան ընտիր փայտ, դեղի վերաբերեալ բոյսեր, վանիլիա, քաքաս, լեղակ, մորթ, կաշի, բուրդ և շն: Ամերիկայի մէջ կալուածներ ունին Անգլիա, Ֆրանսա, Հոլանտա և Տանրմարքա:

Ամերիկայի գլխաւոր նաւահանգիստներն են .

Ատլանտեանի վրայ՝ Բէպէք, Մօնրէալ, Հալիֆաքս, Պոսթըն, Նիւ-Եօրք, Ֆիլատէլֆիա:

Մեքսիկայի ծոցին վրայ են՝ Նոր Օրլէան և Վէրա-Բրուզ:

Հարաւային Ամերիկայի մէջ՝ Ատլանտեանի վրայ կը գտնուին՝ Ճօրճս-Թաուն, Բարամարիպօ, Բէքնամպուք, Պա՛իա, Մօնթէ-Վիտէօ, Րիօ-Եանէյրօ, Պուէնոս-Այրէս:

Խաղաղականի վրայ կը գտնուին՝ Սան-Ֆրանչիսկօ, Փանամա, Կուայաքիլ, Բալաօ, Վալիպարէգօ:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ամերիկան ո՞վ գտաւ: — Բանի՞ ովկիանոս կը տեսնէ: — Մեքսիկայի ծոցին մէջ ո՞ր գետերը կը թափին: Հիւս. Ամերիկայէն Ատլանտեան Թափող ամենէն կարեւոր գետը ո՞րն է: — Ամերիկայի ո՞ր մասերուն մէջ շատ մը հրաբուխներ կը գտնուին: — Պրագիլիոյ մէջ ո՞ր մեծ գետը կայ: — Հիւս. Ամերիկայի մէջ ո՞ր Թերակղզիները կը գտնուին: — Ամերիկայի մէջ ամենէն ցուրտ և ամենէն տաք երկրները որո՞նք են: — Ո՞ր մեծ լեռնագօտին կայ: — Կարեւոր լիճները որո՞նք են: — Ամերիկայի ամենէն յարգի բոյսերը որո՞նք են: — Ո՞ր երկրները Հասարակածի տակ կը գտնուին:

Պ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ո՞ր երկրներուն մէջ կը գտնուին Փանամա, Ուս շինկՊըն, Վերա-Բրուզ, Րիօ-Եանէյրօ, Նիւ-Եօրք, Սան Սալվատօր, Բէպէք, Պուէնոս-Այրէս, Մօնրէալ, Գարաքաս, Ֆիլատէլֆիա, Բիդօ, Բալաօ, Չիքսկօ՝ Բամբէջ և Սան-Ֆրանչիսքօ:

Վերոյիշեալ քաղաքներուն մէջէն որո՞նք նաւահանգիստ են և ո՞ր կը գտնուին:



Հ Ր Ա Հ Ա Ն Գ

1. — Ամերիկա կը բաժնուի ..... մասերու:
2. — Ամերիկա ունի ..... մեծ թերակղզիներ:
3. — Ամերիկայի ամենէն բազմամարդու քաղաքակրթեալ երկիրն է .....
4. — Ամերիկան գտնուեցաւ .....ին:
5. — Հայ գաղթականութիւններ կը գտնուին ..... մէջ:
6. — Ամերիկայի մէջ ամենէն շատ խօսուած լեզուներն են .....
7. Ամերիկայի ամենէն տաք երկրներն են .....
8. Ամերիկայի ամենէն ցուրտ երկրներն են .....
9. — Ամերիկա Ասիայէ բաժնուած է ..... ի նեղուցով:
10. — Միսիսիփի և Միսուրի մեծ գետերը կ'անցնին ..... մէջէն:
11. — Ամազոն կը թրջէ .....
12. — Ամերիկայի կառավարութեանց ձևն է .....



Ո Վ Կ Ի Ա Ն Ի Ա

Դ Ա Ս Լ Բ .

Ովկիանիա անուէր կուտան՝ Մեծ ովկիանոսին մէջ և Հին ու Նոր աշխարհներու միջև սիւսուած այն մեծ ու փոքր շատ մը կղզիներուն՝ որոնք երկրիս Հինգերորդ մասը կը կազմեն:

Ովկիանիա կը բաժնուի հինգ մասերու. Մալեզիա, 2. Մելանէզիա, 3. Միքրոնէզիա, 4. Փոլինէզիա:

Ովկիանիա մեծ մասամբ կը գտնուի Հասարակածի տակ և շատ տաք կ'ընէ: Կղզիները լեռնոտ և հրաբխային են: Հողը թէև բարեբեր, բայց աղէկ մշակուած չէ:

Գլխաւոր բոյսերն են բրինձ, շաքարեղէգ, լեղակ, արմաւ, բամպակ, արմաթ, քափուր, ծխախոտ, քօքօ, խահուէ, պղպեղ և ուրիշ համեմունքներ, շինութեան փայտ, և շն:

Ովկիանիայի մէջ թէ՛ ընտանի և թէ՛ վայրի ամէն տեսակ կենդանիներ կը գտնուին:

Ովկիանիա ունի երկաթի, պղնձի, անագի, ադամանդի և հանքածուխի հարուստ հանքեր: Ոսկի կը գտնուի Աւստրալիոյ մէջ:

Ովկիանիայի տարածութիւնն է 10 միլիոն քառակուսի քիլօմէթր, որ Եւրոպայի չափ ըսել է գրեթէ: Ունի 40 միլիոնի չափ բնակիչ, որոնց մեծ մասը տակաւին վայրենի վիճակի մէջ է:

Մ Ա Լ Է Զ Ի Ա

Այս արշիպելագոսը կը գտնուի Ովկիա-

նիայի արեւմտեան կողմը: Գլխաւոր կղզիներն են ՍՈՒՄՍԻՐԱ, որու գլխաւոր քաղաքն է Փասան: ՃԱՎԱ, գլխ. քաղաքն է Պաքալիա: ՊՕՐՆԷՑ, ՄՈԼՈՒՔԵԱՆ և ՉԷԼԷՊԵԱՆ կղզիներ՝ որոնք Հոլանտայի կը վերաբերին: Իսկ ՓԻԼԻՊԵԱՆ արշիպելագոսը կը պատկանի Ամերիկայի Միացեալ Նահանգաց: Փիլիպեաններուն գլխաւոր քաղաքն է Մանիլա:

Մ Է Լ Ա Ն Է Զ Ի Ա

Որ կը կոչուի նաև Աւստրալիա, կը գտնուի Ովկիանիայի հարաւ. կողմը: Գլխ. կղզիներն են ԱՒՍՏՐԱԼԻԱ, որ, թէև շատ մեծ կղզի մըն է, բայց հազիւ 4 միլիոն բնակիչ ունի: Գլխ. քաղաքներն են Մելպորն և Սիճնէյ: ԹԱՍՄԱՆԻԱ, կը գտնուի Աւստրալիոյ հար. կողմը: ՆՈՐ ԿՈՒՆԻՆԻԱ, կը գտնուի Աւստրալիոյ հիւս. կողմը, բնակիչները կը կոչուին Բաբու:

Ասոնցմէ զատ՝ կան նաև Պիզմարեան. Լա-Բերուզի, Նոր Հեպրիսեան, Հոգույն-Սրբոյ և Նոր Բալթսոնեա՝ փոքր արշիպելագոսները:



ՆՈՐ ԶԷԼԱՆԵՏԱՅԻ

Մ Ի Ք Ր Ո Ն Է Ջ Ի Ա

Որ կը նշանակէ փոքր կողմ կը գտնուի Ովկիանիայի հիւսիսային կողմը: Գլ. Սը- շիպեղագոտներն են ՄԱԿԷԼԼԱՆԻ, ՄԱ- ՐԻԱՆԵԱՆ, ՔԱՐՈԼԻՆԵԱՆ, ԺԻԼՊԷՐԻ և ՄԱՐՇՆԼԻ կղզիները:

Փ Ո Լ Ի Ն Է Ջ Ի Ա

Որ կը նշանակէ շատ որովհետև կը պարունակէ շատ մը մանր կղզիներ և կրկ- զեխումբեր: Գլխաւորներն են ՍԱՆՏՈՒԻՉ,

ԲԱՐԵԿԱՄԱՅ ԿՂԶԻՆԵՐ, ՆԱԻՈՐԴԱՅ ԿՂԶԻՆԵՐ, ՄԱՐԳԻԶԵԱՆ ԿՂԶԻՆԵՐ և ՆՈՐ ԶԷԼԱՆՏԱ:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ովկիանիա ո՞ր կիսագունտին մէջ կը գտնուի: — Քանի՞ մասերէ բաղկացած է: — Ամենէն մեծ կղզի- ները որո՞նք են: Բնակիչները ի՞նչ վիճակի մէջ են: — Ամենէն կարեւոր բերքերն որո՞նք են: Ինչ հարուստ հանքեր ունի: — Ովկիանիոյ ամենէն երեւելի քաղաք- ները որո՞նք են: — Ո՞ր արշիպելագոսը Միացեալ Նահանգներուն կը վերաբերի: Ասիան ո՞ր նեղուցով բաժնուած է Ովկիանիայէ:



Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն Կ Ա Յ Ս Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Հնդարձակ և հարուստ պետութիւն մըն է Օսմ. Կայսրութիւնը որ կազմուած է Եւրոպայի, Ասիոյ և Ասորիկէի մէջ ունեցած կարեւոր երկիրներով:

Նախ սկիզբ Ասիական բաժինէն:

Օսման. Ասիան ամենէն ընդարձակ և բազմամարդն է: Կը տեսնէ 5 ծով: Հիւս. կողմը կայ Սեւ ծով. Արեւմ. կողմը՝ Մար- մարա և Արեւիկազոս. Հարաւը՝ Միջեր- կրական. Հար. արեւել. կողմը՝ Պարսից ծոց կամ ծով:

Օսման. Ասիոյ արեւմ. մասը որ մեծ ցամաքակղզի մըն է, կը կոչուի Անատոլու կամ Փոքր Ասիա:

Օսմ. Ասիա վարչական 22 մասերու բաժնուած է որոնք կը կոչուին վիլայէր, այսինքն կուսակալութիւն, Իսկ կառավա- րողներն ալ՝ վալի կ'ըսուին: Օսմ. Ասիոյ Արեւելեան հիւս. մասին ներքին գլխ. քա-

ղաքներն են՝ Էրզրում, վան. Պայագիս, Պիրիզ, Էրզինկեան, Մուս, Խարբուք, Տիարպէֆր, Սլավազ, Մալաթիա, Էկիմ, Արաբիլի ևլն.:

Անատոլուի ներքին գլխ. քաղաքներն են՝ Արուսա, Պիլենիկ, Թոզար, Ասա-Քա- զար, Էսկի-Շեհիր, Ամասիա, Էնկիւբի, Շապին-Գարահիսար, Քեօրահիա, Այսթն, Մանիսա, Գօնեա, Գայսեի, Գարաման, Աֆիոն-Գարահիսար, Ասանա, Սիս, Ազ- Շեհիր, Եոզգաս ևլն.:

Արեւելեան հար. մասին ներքին գլ. քա- �ղաքներն են՝ Գամասիոս կամ Շամ, Հա- լայ, Ուրֆա, Մարա, Երուսաղեմ, Ան- սիոն՝ Պաղսաս, Մուսուլ, Պատրա, Համա. Այնթապ ևլն.:

Օսմ. Ասիոյ գլ. նաւահանգիստներն են, Տրապիզոն, Կիրասոն, Սամսոն, Սինոպ, Ինեպոլու և Էրեյլի՝ Սեւ ծովու վրայ:

Իզմիթ՝ Նոյն ծոցին վրայ: — Մուսանիա և Պանսուա՝ Մարմարայի վրայ: Տարսանէ կամ Չանաֆ-Քալէ՝ համանուն նեղուցին՝

արհեստներով, խաշնարածութեամբ և վա- ճառականութեամբ:



ԵՐՈՒՍԱՂԵՄ

Իզմիթ և Չեւիկ՝ Արշիպելագոսի վրայ: Ասալիա, Մերսին, Իսկէնսէրուն, Թա- րապուլուս, Պէյրուք, Եաֆա՝ կը գտնուին Միջերկրականի վրայ:

Արշիպելագոսի մէջ կը գտնուին Թեքե- սոս, Միսիլի, Քիոս կամ Մագրոզ, Բասոս, Լիմնի և ուրիշ քանի մը փոքր կղզիներ՝ որոնք առանձին կուսակալութիւն մը կը կազմեն:

Օսմ. Ասիոյ հողը շատ բարեբեր է և կ'արտադրէ առատ արմաթ, բամպակ, ծխախոտ, ձիթենի, որթատունկ, ներկի նիւթեր, արմաւ, նարինջ, լեմոն, շաքա- րեղէգ, խաճուէ, գետնախնձոր, բրինձ, ա- ֆիոն, չամիչ. թուզ և ուրիշ շատ մը հա- մեղ պտուղներ:

Ունի ամէն տեսակ ընտանի և կաթնու- տու կենդանի և հարուստ հանքեր: Օսմ. Ասիոյ մէջ շինուած են և հետզհետէ ալ շինուելու վրայ են երկաթուղիի և հեռա- գրական գիծեր ու կառուցիւններ:

Օսմ. Ասիոյ մէջ ընկող գլխաւոր ազ- դերն են Թուրք, Հայ, Յոյն, Ասորի, Արաբ, Հրեայ, Քիւրտ, Լազ, Չեքեզ, ևլն., որոնք կ'զբաղին երկրագործութեամբ, տեղական



ՔԻԻՐՏ

Օսմ. Ասիոյ ընակիչներուն թիւն է 16 միլիոն:

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՒՐԿԻԱ

Գեղեցիկ և հարուստ երկիր մըն է Եւր. Թուրքիա: Կը տեսնէ 5 ծովեր: Սեւ ծով՝ արեւելեան կողմը: — Մարմարա և Արեւ- պելագոս՝ հար. կողմը. Յոնիական և Ադ- րիական ծովերը՝ արեւմ. կողմը:

Եւր. Թուրքիա բաժնուած է 7 կուսա- կալութիւններու, 1. Կ. Պոլիս. 2. Էսթր- քե. 3. Սեյսնիկ. 4. Մանասքր. 5. Գո- սուվա. 6. Եանեա. 7. Շֆոսա:

Կ. Պոլիս քաղաքին կուսակալը կը կոչուի Շէհիր Էմինի, այլինքն՝ Գաղաքա- պետ:

Կ. Պոլսոյ վրայ արդէն խօսեցանք: Խօ- սինք ուրեմն մնացեալներուն վրայ:

Եւր. Թուրքիոյ գլխ. քաղաքներն են՝ Էսթրքե, Մուսթաֆա-փաւա, Քրք-Քիլիսե, Տրամա, Գոսուվա, Մանասքր. Իւսթիպ, Բրիթթինա, Շֆոսա, Եանեա, Պեքաք, Էր- կեի, Միքրովիցա ևլն.:

Գլ. նաւահանգիստներն են, Թեֆրսաղ Մարմարայի վրայ, Կեյիպուլու՝ Տարսանէի

նեղուցին բերանը, Տեսե-Աղան, Էնոս, Գավալա, Ենիհե և մանաւանդ Մելանիկ նշանաւոր նաւահանգիստը՝ Արշիպեղազոսի վրայ : Բեկվեզա և Բարկա՝ Յոնիականի վրայ : Ավրոնա, Տրաչ կամ Տուրացցո՝ Ադրիականի վրայ :

Միջերկրականի մէջ է Կեհե մեծ կղզին : Գլխ. քաղաքներն են Գանճիա, Բեքիմո, Հանիա :

**ՕՍՄԱՆԱՆ ԱՓՐԻԿԷ**

**Ե Գ Ի Պ Տ Ո Ս**

Ափրիկէի հիւս. արեւ. կողմը զեղեցիկ ու շատ բարեբեր երկիր մըն է Եգիպտոս : Մէջէն կանցնի Նեղոս մեծ գետը : Գլխ. քաղաքներն են Գանիբե, Ալեքսանդրիա, Սուեզ, Բոս-Սայիս, Սիուզ, Բոզեք, Տամիք, Չալկազիկ և շն. :

Եգիպտոս 9 միլիոն բնակիչ ունի : Եգիպտոսի կուսակալը կը կոչուի խըսիվ, որ ըսել է Փոխարքայ :

Եգիպտոս առժամայ կերպով կը զբաւուրի Անգլիոյ տիրապետութեան ներքեւ :

**ՂԱՐՊ ԹԱՐԱՊՈՒԼՈՒՍ**

Միջերկրականի եզերքը ու Եգիպտոսի արեւմտ. կողմը կը զանուրի : Գլ. քաղաքներն են Թաբալլուս, Պեկկազի, Մուրզուզ :

**ԸՆԴՀ. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ**

**ՕՍՄԱՆԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ**

Օսմ. կայսրութեան ամեն զեղէ ժողովուրդները կը վայելեն ազգային և կրօնական կատարեալ ոգատութիւն :

Իսլամներու, այսինքն Մահմէտականներու կրօնական պետն է Վեչ. ՍՈՒԼԹԱՆը որ կը կոչուի Խալիֆէ և որ կը նշանակէ Յաջորդ Մարգարէին :

Օսմանեան Կայսրութիւնը 1908 Յուլիս 10 էն ի վեր՝ եղած է Սահմանադրական Կառաւարտ քիւն :

Ունի ամէն ազգի ներկայացուցիչներէ բաղկացած Ազգային ժողով (Մէճլիսը Մէպուսան) և Ծերակոյս (Մէճլիսը Այան) :

Արդի Սահմանադրական անդրանիկ Վեհապետն է Օգոստափառ ՍՈՒԼԹԱՆ ՄԷՃԷՄՄԷՏ Ե. բարի, ազատամիտ և ժողովրդասէր Կայսրը :

Տաճկաստանի մէջ ամէն Գրիստոնեայ հասարակութիւն իր առանձին Պատրիարքն ունի որ Վեչ. Սուլթանին կողմէ հաստատուելով՝ իր ժողովուրդին ազգային հոգևոր պետքերը կը հոգայ : Հրեաներն ալ ունին իրենց կրօնական պետը որ կը կոչուի Խախամ պաշի :

Հայերը Տաճկաստանի մէջ ունին երկու կարողիկոսութիւն և երկու Պատրիարկական Արքու :


Առաջինը կը զանուրի Կիլիկիոյ Սիա քաղաքին, իսկ երկրորդը՝ Վանայ ծովուն Աղբամաբ անունով փոքր կղզիին մէջ :

Պատրիարքական աթոռ մը կայ Ս. Երուսաղէմի մէջ՝ ուր Հայերս ունինք կրօնական մեծարժէք հաստատութիւններ :

Կ. Պոլսոյ Պատրիարկութիւնը ամենէն մեծն է, որովհետև բոլոր Տաճկաստանի Հայոց կրօնական իշխանութեան պետը և Տէրութեան առջև ալ Ազգի ներկայացուցիչն է :

Տաճկաստանի Հայերն իրենց առանձին Սահմանադրութիւնն ունին :

Թէ՛ Պոլիսէն և թէ՛ զաւառներէն ընտրուած երեսփոխաններու ժողովը կը կոչուի Ազգ. կամ Ընդհանուր ժողով որ կ'ընտրէ Բաղաւական և Կրօնական ժողովները ու



Կէրսէր

րոնք կը կոչուին Ազգ. Վարչութիւն : Պատ-  
րիարքը իբրև Նախագահ , այս ժողովնե-  
րով կը վարէ Ազգին կրօնական և քաղա-  
քական գործերը :

Քաղաքական և Կրօնական ժողովներէն  
ի զստ՝ կան նաև Ուսումնական , Տնտեսա-  
կան , Դատաստանական , Վանօրէից և Կը-  
տակաց խորհուրդներ :

Թէ՛ գաւառներու և թէ Մայրաքաղա-  
քիս մէջ՝ ամէն թաղ ունի ժողովուրդէն  
ընտրուած քաղական խորհուրդ մը որ իր  
թաղին եկեղեցիին , դպրոցին և աղքատ-  
ներուն հոգ կը տանի :

Գաւառները կը կառավարեն Վարդա-  
պետ կամ Եպիսկոպոսներ որոնք կը կոչուին  
Առաջնորդ : Իսկ աշխարհիս վրայ գտնուած  
բոլոր Հայերուն և Հայ Եկեղեցիին հոգե-  
ւոր գլուխը կը կոչուի Ամենայն Հայոց  
Ընդհանրակիսն Հայրապետ որ կը նստի Էջ-  
միածին (Կովկասի մէջ) :

Տաճկաստանէ ի զստ Հայ գաղթակա-  
նութիւններ կը գտնուին Ռուսիոյ , Պարս-

կաստանի Հնդկաստանի՝ Պուլկարիոյ , Ե-  
գիպտոսի Ամիրիկայի ու Եւրոպիոյ քանի  
մը երկիրներուն մէջ : Տաճկաստանի Հայոց  
մէջ կան նաև Հռոմէական և Բողոքական  
փոքր հասարակութիւններ՝ որոնք իրենց  
առանձին հոգեւոր պետերը և օրէնքները  
ունին :

Օսմ. Պետութեան մէջ հետզհետէ շին-  
ուելու վրայ են երկաթուղիներ , կառուցի-  
ներ , կամուրջներ , քարայրներ , Հեռագրա-  
կան գիծեր ևւն . : Արուեստ , ձեռագործ ,  
տեղական արհեստներ և վաճառականու-  
թիւնն ալ օրէ օր յառաջ երթալու վրայ են :  
Հայերը Տաճկաստանի մէջ կ'ըրազին  
Տէրութեան պաշտօններով , երկրադործու-  
թեամբ , տեղական արհեստներով , վաճա-  
ռականութեամբ , խանութպանութեամբ ,  
ևւն . :

Տաճկաստանի մէջ՝ Հայոց երեւելի վան-  
քերն են Երուսաղէմի , Սիսի , Մոչոյ , Վա-  
րազայ , Կեսաբիոյ , Աւմաշի ևւն . վան-  
քերը՝ որոնք չին ասոններէ ի վեր երեւելի  
ուխտատեղիներ են :

Տաճկաստանի Հայոց մէջ կը գտնուին  
համբաւս որ եկեղեցականներ , բժիշկներ ,  
փաստարաններ , դատատուններ , ուսումնա-  
կաններ , արհեստարաններ , ճարտարապետ-  
ներ , վաճառականներ , տէրութեան պաշ-  
տօնեաներ ևւն . որոնց ամենքն ալ Օս-  
մանեան հայրենիքին փառքը կը կազմեն :

ՀԱՐՑԱՐԱՆ

Օսմ. Ասիա բնական քանի՞ մասերու  
կը բաժնուի . — Քանի՞ ծով կը տեսնէ . —

Այդ ծովերուն վրայ ո՞ր երեւելի նաւա-  
հանգիստները կան . — Օսմ. Ասիա քանի՞  
կուսակալութեանց բաժնուած է . Ինչ ազ-



ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

S. S. ՄԱՏԹԵՆՈՍ Բ. ԱՐԲԵՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

գեր կը բնակին հոն . — Ինչ բոյսեր ու կեն-  
դանիներ ունի :

Եւր . Թուրքիոյ սահմանները որոնք են .  
— Քանի՞ ծով կը տեսնէ . — Որոնք են  
գլ . նաւահանգիստները : Երբքին գլ . քա-  
ղաքները : Գլ . գետերը . — Ինչ բոյսեր ու  
կենդանիներ ունի :

Տաճկաստանի Հայերը քանի՞ կաթողի-  
կոսութիւն և քանի՞ պատրիարք ունին . —  
Ուր կը նստի ամենայն Հայոց Կաթողի-  
կոսը : Հայերը Տաճկաստանի մէջ ինչ գոր-  
ծերով կ'ըրազին . Աշխարհի ուրիշ ո՞ր մա-  
սերուն մէջ Հայ գաղթականութիւններ  
կան . — Օսմ. Ասիայի գլխ . քաղաքները  
որոնք են : Օսմ. Ասիոյ մէջ ինչ երեւելի  
վանքեր կան :

ՄՏԱԻՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Տրապիզոնէն Իսլամ ուխտաւորներ նաւ

նստելով պիտի երթան Մեքէ : Կուղենք  
գիտնալ թէ այդ շոգեհատը ո՞ր ծովերէն ու  
նեղուցներէն պիտի անցնի և Օսմ. Ասիոյ  
ո՞ր նաւահանգիստները պիտի տեսէ՝ մինչեւ  
որ հասնի ձիսսէ՝ Մեքէ քաղաքին նաւա-  
հանգիստը :

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ո՞ր երկիրներուն մէջ կը գտնուին Այ-  
տրն , Գօնիա , Գայսէրի , Երեւան , Երուսա-  
ղէմ , Էնկիւրի , Էրզրում , Դաւրէժ , Թիֆ-  
լիզ , Թոքատ , Իսպահան , Խոքանտ , Հա-  
լէպ , Հէրադ . Աէքքէ , Միաքօ , Մուշ ,  
Նանքին , Շամ , Շիրազ , Պաղտատ , Պիթ-  
լիզ , Պուխրա , Պրուսա , Սվազ , Տրապի-  
զոն , Սմրղանտ , Մատրաս , Նակազաքի ,  
Ատէն , Սայկօն , Հոնկ-Քոնկ , Թօպուք ,  
Պոմպայ , Սամսոն , Կեն . Կեն . :



7225

1822

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003239

ՀԵՂԻՆԱԿԻՆ ԵՊԿՍՒՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- |      |   |   |     |      |
|------|---|---|-----|------|
| 1.   | — | Համառոտ Օսմ. Պատմություն (Բ. Տպ.)   | Գին | 2,50 |
| X 2. | — | Ընդամենը Առաքելագրություն, Բնական, Քաղաքական եւ Ապետական՝ ի պէս <u>Երկրորդական վարժարան սց (Ապառաժ)</u>                     |     | 7    |
| X 3. | — | Պատկերազարդ Բնական, Քաղաքական եւ Աստվանական Առաքելագրություն՝ <u>Բարձրագոյն դասընթացի կարգերու համար (Գ. Տպագր.)</u>        |     | 6    |
| X 4. | — | Պատկերազարդ Բնական, Քաղաքական եւ Տնտեսական Առաքելագրություն՝ <u>Միջին դասընթացի կարգերու համար (Զ. տպագր.)</u>              |     | 5,50 |
| 5.   | — | Պատկերազարդ Բնական, Տեղագրական եւ Քաղաքական համառոտ Առաքելագրություն՝ <u>Տարրական դասընթացի կարգերու համար, (Գ. տպագր.)</u> |     | 4    |
| 6.   | — | Համառոտ Ընդհ. Ազգաց պատմ. Արեւելեան Հին ժողովրդոց, Յունաց եւ Հռոմեացոց (Պատկերազարդ), Միջին եւ բարձր դասընթացներու համար:   |     | 5    |
| 7.   | — | Համառոտ Ընդհ. Պատմ. Միջին Դարու եւ Նոր Ազգաց, Միջին եւ բարձր. կարգերու համար:   |     | 7    |
| 8.   | — | Համառոտ ժամանակակից Պատմ. (Պատկերազարդ) Միջին եւ բարձր դասընթացներու համար:   |     | 7    |
| 9.   | — | Կենսագր. Սեբուսի Մայրապետի Գալթանան:  |     | 5    |